Զ. ՏԱՐԻ 1610 ԹՈՒԱԿԱՆ ՀԱՅՈՑ 10 ՄԱՐԵՐԻ 4381 — Հ. Տ. 17 ՄԱՅԻՍ 1889 — Ն. Տ. 29 ՄԱՅԻՍ 1889 — ՀԻՃՐ. 29 ՌԱՄԱԶԱՆ 1306 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ

20 ՓԱՐԱ.

ՆԱՄԱԿ ԿԱՄ ՈՐ ԵՒ ԻՆՉ ԳՐՈՒԹԻՒՆ ՊԷՏՔ Է ՈՒՂՂԵԼ
ԱՌ ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ
ԱՐԵՒԵԼՔ ՕՐԱԳՐԻ
Ղալաթիա, Նորատունկեան-խան

درعليه‌ده غلطه‌ده نورادونكيان خانده آره‌وك
غزته‌سى اداره‌سنه

Direction du Journal AREVELK
Noradounghian Han, Galata
CONSTANTINOPLE

ԱՐԵՒԵԼՔ
ՕՐԱԳԻՐ
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ

20 ՓԱՐԱ.

ԳԱՆՁԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Կ. Պոլսոյ համար Տարեկան գանձեկան արժողութ.	160
» » Վեցամսեայ » »	80
» » Եռամսեայ » »	40
Դուռաւոյց » Տարեկան » »	200
» » Վեցամսեայ » »	100
Օտար երկիրներէ տարեկան գրանք	59
» » վեցամսեայ »	28

Դուրս զրկուած լրագրոյց համար ուղարկուած ծախքը Տնօրէնութեան վրայ է
Խմբագրութեան զրկուած նամակ կամ գրութիւն կը չարչարիր

Les annonces sont reçues
AUX BUREAUX DU JOURNAL

Կ. ՊՈԼԻՍ, 17 ՄԱՅԻՍ, 1889

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

ԱՐԴԻ ԿԱՑՈՒԹԻՒՆ

Ումպէրթօ Թագաւորին փոխադարձ այցելութենէն ի վեր, քաղաքական կացութիւնն աւելի ապահովեալ կ'երեւի։ Ֆրանսա, Արուեստահանդէսով զբաղեալ, իւր խաղաղասիրութեան սքանչելի մէկ ապացոյցը կ'ընծայէ, և Պիզմարք իշխան, գերման կայսրութեան բռնած դրից ամրանդմանն համար, խաղաղութեան պահպանման կը փափաքի։ Իտալիա, Պ. Քրիսպիի պէս գործօն աշխարհավարի մը անօրինութեան ներքեւ, թերեւս ազդու քաղաքականութեան մը բաղձայ՝ իւր վայելած հզօր դաշնակցութիւններէն անմիջական շահ մը հանելու։ Բայց եթէ Պ. Քրիսպի կը տածէ այսպիսի ձգտումներ, հաւանական չէ որ քաջալերութիւն գտնէ Պիզմարք Իշխանէն։ Այն զրոյց թէ Ումբերթօ թագաւոր Սթազպուրկ պիտի երթայ, և Ֆրանսայէն կորզեալ հողին վրայ Վիլհելմ կայսր և իւր վեհափառ դաշնակից զօրահանդէս մը պիտի կատարեն, շատ յուզեց ֆրանսական մամուլը։ Բայց երկկ արժեղրեալ ընդհանուր բարձրացումն ըստ բաւականին կ'ապացուցանէր թէ սոյն զրոյց հիմ չունէր, և հաւանօրէն Սակարանի շահագիտաց սովորական եպերելի մեքենայութիւններէն մին էր՝ ընդհանուր անկումը մը յառաջ բերելով թուղթեր ժողվելու և յետոյ շահով ծախելու թափանցիկ դիտմամբ։ Մինչեւ իսկ եթէ Վիլհելմ կայսեր կրկնոտ ոգին զինք մղէ այնպիսի ցոյցերու, Ումբերթօ թագաւոր աւելի ըզգուշաւորութիւն կը ցուցնէ Ֆրանսայի հետ իւր յարաբերութեանց մէջ, և հաւատալի չէ որ վայրապար թշնամանք մ'ընէ իւր հզօր դրացւոյն, որուն հետ եթէ բարեկամ չէ այժմ, դեթ յայտնապէս թշնամանալու անմիջական պատճառ ալ չունի։

ՈՒՄՊԷՐԹՕ ԹԱԳԱՒՈՐԻՆ ՈՒՂԵՒՈՐՈՒԹԻՒՆԸ

Փարիզի լրագիրք ոմանք կ'ըսեն իրենց մայիս 26 թուով թէ Ումբերթօ թագաւոր ի Սթրազպուրկ մտադրեալ ուղեւորութենէն ետ կեցաւ Իտալիայէն առնուած այն հեռագրոց շնորհիւ որք կ'ազդարարէին թէ այսպիսի հակաքրանական դրգռում մը ծանր հետեւանք կրնայ ունենալ պետութեան և մանաւանդ Պ. Քրիսպիի համար։

Ումբերթօ թագաւոր երկկ (երեքշաբթի) Միլան պիտի հասնէր, և անոնցմէ ցոյցերու մասնակցելու հակամէտ անոնց անձինք ձերբակալուած են կանխաւ։

ՄԱՆՃԱՌՔ ԵՒ ՍԵՐՊԻՔ

Մանաւանդ կառավարութիւնը կը վախնայ թէ Սերպերուն ազդասիրական մեծ ցոյցը՝ Քոսովայի ճակատամարտին հինգերորդ հարիւրամեակն՝ Հունգարիայ Սերպերը դրգռելու հանգամանք չունենայ։ Հետեւապէս, փէշթայէ մայիս 26 թուով հեռագիր մը կը ծանուցանէ թէ արտասովոր միջոցներ ձեռք պիտի առնուին սոյն տարեդարձին Ռավանիձայի սերպ վանքին մէջ տօնախմբմանն առթիւ։ Մաճառ կառավարութիւնը Միթրովիձայի ընդհանուր դատախազը կանչած է այս մասին որոշեալ տնօրինութիւններն իրեն հաղորդելու։ Ի Սեմլին և ի Միթրովիձա խիստ հսկողութիւն պիտի լինի անցագրաց վրայ, որպէս զի օտարազգի դրդռիչներ այս առթիւ չսպրդին Հունգարիոյ Սերպերուն մէջ։

ԴԵՐՄԱՆԻԱ ԵՒ ԱՐՈՒԵՍՏԱՀԱՆԴԷՍ

Պերլինի քաղաքային խորհրդոյն մէջ քննութեան առնուեցաւ դերման գործաւորաց պատուիրակութիւն մը Փարիզի Արուեստահանդէսը զրկելու առաջարկ մը։ Երեւելի գիտնական Պ. Վիրխով պաշտպանեց առաջարկը, գովելով Արուեստահանդէսն, ուր գործաւորք կրնան բան սովրիլ, բայց յարեց թէ լաւագոյն է գերման գործաւորները Փարիզ զրկել ընկերվարական համաժողովներու վերջանալէն առաջ։ Բայց քաղաքային խորհուրդը մերժեց առաջարկը գլխովին։

ՆԱՍՐԵՏՏԻՆ ՇԱՀ

Վեհ. Շահը, Մոսքուայէ մեկնելէն առաջ, պատուանշաններ բաշխեց վաթսուն ռուս անձնաւորութեանց, յորս Մոսքուայի կուսակալ Տոլկորուքով իշխան ստացաւ Գուտսի նուիրական պատուանշանն, որ արքայազնց աւելի կը տրուի սովորաբար։

ԱԼԶԱՍ-ԼՈՌԷՆ

Ի Մէջ, Պ. Անթուէնի տեղ, ինքզինք երեսփոխանական ընտրելի կ'առաջարկէ 80 ամեայ Պ. Պէյյոթ, նախկին փաստաբան, որ Ալզաս Լոռէնի խնդրոյն մէջ իրեն հիմ կ'առնու Վեսթֆալիոյ դաշնագիրն 1648 ի, որոյ բնագիրն իւր ընտրողաց կը ցրուէ՝ անոնց միտքերը պատրաստելու համար իւր քաղաքական դատութեան։ Այն դաշնագրով Ալզաս Ֆրանսայի տրուած էր, բաց ի Սթրազպուրկէ որ ազատ քաղաք կը մնար։ Ուրեմն, ջերմ ֆրանսասէր Պ. Անթուէնի տեղ, որ Ալզաս-Լոռէնին պարզապէս Ֆրանսայի վերադարձումը կը պահանջէր, նոր ընտրելին Ֆրանսայի և Գերմանիոյ միջև իրաւախոհութեան մը կուսակից կը հանդիսանայ։

ՊՈՍՆԱ-ՀԷՐՍԷՔ

Լ. Հէրբէր արտասած է Թէյդի այն լուրը թէ Պոսնա-Հէրսէքի մէջ «համասերպիական» մեծ շարժում մը կայ, և բազմաթիւ ձերբակալութիւնք եղած են։ Ռուս մեքենայիչներու մասը կ'երեւի գործին մէջ, որք Աւստրիոյ կառավարութեան դժուարութիւն կ'ուզեն հարուցանել։ Ինչպէս համասլաւեան շարժումը կ'ենթադրէ բոլոր սլաւ ազգաց միութիւնն ընդ ռուսական թեւարկութեամբ, համասերպիական դաղափարը մեծ Սերպիա մը կ'երեւակայէ։

ՖՐԱՆՍԱԿԱՆ ՍԵՂԱՆԱՒՈՐՈՒԹԻՒՆ

Առաջիկայ շաբթուն Փարիզի մէջ ի վաճառ պիտի հանուի երեւելի սեղանաւոր և դրամատէր Պ. Մէքրէմթոնի հոյաչէն տունն ի Ռիւ աբ Մոնսէյ։ Տունէն զատ պիտի ծախուի նաև դեղարուեստից այս մեծ սիրահարին իբր տասն միլիոն ֆրանքի արժողութեամբ պատկերաց ընտիր հաւաքածոյն։ Այս վաճառման հասոյթը պիտի տրուի Պ. Մէքրէմթոնի պարտուց, որ, ինչպէս յայտնի է, պղինձի շահագիտութենէն ամենէն աւելի ճաստուած ֆրանսացի սեղանաւորներէն մին է։ Պ. Մէքրէմթոն այս սքանչելի հաւաքածոյին մեծագոյն մասը ձեռք անցուցած էր շնորհիւ այն մեծամեծ շահերու զոր՝ ըրած էր պղինձի գործէն, և նոյն գործն է որ այժմ փճացուցած է իւր բովանդակ հարստութիւն։ Պատկերներն 200 հատ են, հին և նոր վարպետներու գործ, ֆլրանսայի թէ օտարազգի։ Գեղարուեստի սիրահարաց համար օրուան մեծ դէպքերէն մին է այս վաճառումն։

ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՈՃԻՐ Ց'ԱՄԵՐԻԿԱ

Միացեալ Նահանգաց մէջ գործածուած ոճիր մը այժմ Ամերիկայի և Անգլիոյ մէջ մեծապէս ուշադրութիւն կը գրաւէ։ Զիքակօ բնակեալ Տքթ. Քրոնին բժիշկը, ընկեր իռլանտացի, վերջին ժամանակներս վէճի մէջ էր տեղւոյն իռլանտական Դաշնակցութեան հետ, որոյ դլխաւոր անդամները կ'ամբաստանէր թէ ազգային նպատակաւ հաւաքուած դումարներէն իբր 40,000 անգլ. ոսկի իրենց կոկորդն անցուցած կամ ապօրէն նպատակներու գործածած են։ Այս պատճառաւ Տքթ. Քրոնին իւր ազդայնոց մէջ թշնամիներ ունէր։ Երեք շաբաթէ ի վեր անյայտ եղած էր։ այս միջոցիս շատ մը բաներ զրուցուեցան իւր վրայօք։ իւր թշնամիք կը պնդէին թէ Տքթ. Քրոնին ողջ պէտք է լինի։ Վերջապէս, մայիս 22ին խեղճ մարդուն մասամբ փտած մարմինը գտնուեցաւ փոսի մը մէջ։ Կառավարութիւնը դրամական մեծ պարգեւ խոստացաւ ոճրագործներուն վրայ կարեւոր տեղեկութիւն մը տուողին։ Տքթ. Քրոնին բարեկամ է եղեր իռլանտացւոյ ոմանց որք Պ. Փառնէլի անկապատ վկայութիւն տուին Լոնտոնի դատական յանձնաժողովոյն առջեւ։

ՓԱՌՆԷԼԵԱՆ ԴԱՏԱՍՏԱՆ

Իռլանտացի կուսակցապետաց հարցաքննութիւնը կը շարունակի դատական յանձնաժողովոյն առջեւ։ Աշխարհականներէն զատ, ինչպէս Պ. Փառնէլ, Պ. Հարբիկիթը, Լայնն, եկեղեցականներ եւս կը հարցաքննուին, ազգասէր իռլանտացի եկեղեցականներ, որք Պապին խօսքը շատ մտիկ չընելով, իրենց բոլոր ազդեցութեամբ ոյժ կուտան Փառնէլեան շարժման, սկսեալ Տրպլինի արքեպիսկոպոս Տքթ. Ուօլշ։ Այս հարցաքննութիւնք ընդհանրապէս իռլանտական դատին նպաստաւոր ապաւորութիւն մը թողուցին։ Կուսակցապետք յաջողեցան ցոյց տալ թէ իրենք ոճրագործութեան դէմ դրած են, և իրենց կուսակիցներն զգուշացուցած են եղեռնական ծայրայեղութիւններէ։

Բայց Պ. Ուիլիըմ Օ'Պրիէն, ուրիշ իռլանտացի հայրենասէր մը, Փառնէլեան կուսակցութեան սիւներէն մին, որ յԻռլանտա բանտէն հանուելաւ մի քանի օրուան համար՝ դատական յանձնաժողովոյն առջեւ հարցաքննուելու նպատակաւ, իւր պատասխաններուն մէջ քիչ մը ծայրայեղութեան դիմեց։ Խիստ բառերով դատապարտեց իռլանտական դատին հակառակորդաց ընթացքն, որք անգլիական Տէրութեան նկատմամբ Իռլանտացւոց տածած հաւատարմական զգացումները չարաչար գործածել կ'ուզեն, և իւր դաւանած հաւատարմական սկզբանց շնորհիւ իռլանտացի ժողովուրդն անհանդուրժելի դրութեան մը ներքեւ պահելու ջանքերնը կը լինին։ Աւելի եւս սրտայուզութիւն պատճառեց Պ. Օ'Պրիէն երբ մերժեց Թէյդի փաստաբանին ընտրած բացատրութիւնները գործածելով դատապարտել 1867 ի ֆէնիական շարժման պարագլուխները։

Պ. Օ'Պրիէնի հարցաքննութենէն մէկ օր առաջ, Տիկին Կլատսթոն, ազատական տիկնայց Դ.Ռ.Ի.Ի մէջ բանախօսելով, մեծապէս գոված էր Պ. Օ'Պրիէնի անշահախնդիր և ազնիւ հայրենասիրութիւնը։ Տիկին Կլատսթոն օրինակելի համբերութեամբ ներկայ գտնուած է դատական յանձնաժողովոյն ցայտ վայր դումարուած աւելի քան ութսուն նիստերուն, որոց ամէն մին ժամեր կը տեւէ, և ըստ մեծի մասին չատ ձանձրալի մանրամասնութեամբք կը դրաւուի։

* * *

Տրպլինի և իռլանտական դլխաւոր քաղաքաց քաղաքապետք, ի Լոնտոն Ուէսթմինսթրի պալատան օթեւանին մէջ հաւաքեալ, առ Պ. Փառնէլ մատուցին ուղերձներ, որով կը շնորհաւորեն զինք՝ Թէյդի զրպարտութիւններն յաջողապէս հերքելուն համար։ Պ. Փառնէլ պատասխանեց թէ ինք դատական յանձնաժողովին անկողմնակալ դատարան ճանչած էր քննելու համար Թէյդի այն մասնաւոր և որոշ ամբաստանութիւնները միայն որով իրեն վերագրած էր եղեռնագործները քաջալերող նամակներ և զինք եղեռնագործներու մեղսակից ցուցած էր։ Այս մասնաւոր խնդրէն դուրս ինք չի ճանչնար դատական յանձնաժողովոյն ո՛չ ձեռնհասութիւնն ո՛չ ալ անկողմնակալութիւնն, որովհետեւ այս դատաւորք, իրենց սովորական զբաղմանց բնութեամբ, անդէպ են իռլանտական ժողովրդեան պատմութեան ու բնաւորութեան, և մանկութենէ ի վեր կրթուած են հակաիռլանտական դաղափարներու մէջ։ Բայց և այնպէս, Պ. Փառնէլ համաձուած է թէ պատմութեան վճիռը նպաստաւոր պիտի լինի անոնց զորս վայրապար հարուածած էր Թէյմ. Պ. Փառնէլ համաձուած է թէ, այս դժբնդակ պայմանաց մէջ իսկ, իռլանտացի կուսակցապետք յաղթական դուրս պիտի ելնեն քննութենէն, և իռլանտական դատն առաջուընէ աւելի վայլ պիտի առնու շնորհիւ այս դատաստանին։

ԱՐՈՒԵՍՏԱՀԱՆԴԷՍ ՓԱՐԻԶԻ

Փարիզի 1867 և 1878 տարւոյ Արուեստահանդէսից մուտքերը բաղդատուեցան արդի Արուեստահանդէսին հետ։ 1867 տարին շատ փառաւոր տարի մ'էր Ֆրանսայի համար։ մեծանուն կայսր մը, փայլուն կայսրութիւն մը, իրենց շուքը կը սփռէին նմանը ցայն վայր չտեսնուած Արուեստահանդէսի մը վրայ։ Արդ, 1867ին, մայիս 6էն մինչեւ 20, 14 աւուրց միջոցին, Արուեստահանդէսը մտած էին 486,404 անձինք վճարմամբ։ 1878ին նոյն օրերուն մէջ 512,382 անձինք մտած են, ճրիներն եւս հաշուելով, և այս տարի, դարձեալ նոյն օրերուն մէջ, 1,048,838 անձինք մտան վճարմամբ։ Այս տասն և չորս օրերու մէջ երկերկու կիւրակի կան, զի թէ՝ 1867ին, թէ 1878ին և 1889ին մայիսի 6րդ օրն երկուշաբթի կը հանդիպի։ Ուրեմն, հանրապետական Ֆրանսային 1889ի տարւոյ մէջ տրուած Արուեստահանդէսն 1867ին կայսերական Ֆրանսայի տուած Արուեստահանդիսին բաղդատմամբ աւելի քան կրկնապատիկ թուով այցելուներ ունեցած է, թէեւ այս տարի Փարիզ երթալէ և Արուեստահանդիսին մասնակցելէ զգուշացան այն մեծ և փոքր միապետք որք 1867ին սիրով պատասխանած էին Նափոլէոն Դ.ի հրաւէրին։

Բաց ասած, տարուս Ֆրանսական Արուեստահանդիսին այցելուաց թիւը բաղմապատիկ աւելի է թէ Լոնտոնի, թէ Վիեննայի և թէ Ֆիլատէլֆիոյ նախորդ բոլոր Արուեստահանդէսներու այցելուաց թիւերէն։

Ուրեմն, 1889ի համաշխարհական Փարիզեան Արուեստահանդիսին կատարեալ յաջողութիւնն ամէն տարակոյսէ վեր է արդէն։

ՎԱՅԼԻԱՆՈ ԵՂԲՕՐՑ ԴԱՏՆ ԱՆԳԼԻՈՅ ՊԱՆՔԱՅԻՆ ԴԷՄ

«Հայ և յ.ի Ընկերակցութիւն» խորագրով մեր շաբաթ աւուր խմբագրականին մէջ յիշեր էինք Լոնտոնի «Վայլիանո եղբարք» անուն յունական սեղանաւորական տան Անգլիոյ Պանքային վրայ տարած դատական մէկ նշանաւոր յաղթանակն։ Որովհետեւ այս օրերս Վայլիանո եղբարք այս դատն երկրորդ անգամ շահեցան Լոնտոնի վճռաբեկ Ատենին դատավճռով, որուն դիմած էր Անգլիոյ Պանքան, խնդիրն իւր դլխաւոր պարագայիւք մեր ընթերցողաց ներսին յիշեցնել արժան կը համարինք։

Վայլիանո եղբարք երեւելի դիրք մ'ունին Լոնտոնի սեղանաւորական և առեւտրական հրապարակին վրայ։ Եղած է տարի (ինչպէս 1877ին) յորում Անգլիոյ Պանքան երեք ու կէս միլիոն անգլիական ոսկի վճարած է ի հաշիւ Վայլիանո Եղբարց։ Ասոնք Անթոնի Կլիքա անուն երիտասարդ ճարպիկ դրագիր մը ունէին, որ բովանդակ արտաքին թղթակցութիւնը կը վարէր, գործ մեծ վստահութեան, և թէպէտ շատ շռայլ էր, համեստ տնական մը միայն ունէր։ Կլիքա 43 հատ կեղծ փոխանակագրեր կը չնչէ 71,500 ոսկւոյ, և Անգլիոյ Պանքային կը ներկայացնէ իբրեւ Վայլիանո Եղբարց կողմէ ընդունուած։ Պանքան կը վճարէ։ Եղբէն կը յայտնուի նենգութիւնը։ Կլիքա Սակարանի մէջ ընդարձակ շահագործութիւններ ընելով մեծ կորուստներ կրած էր, և զանոնք հատուցանելու համար այս նենգութեան դիմած էր։ Կը դատուի և շղթայակալ աշխատութեան կը դատապարտուի։ Արդ, մնան ոմն պէտք էր կրէր, Պանքա՞ն թէ Վայլիանո Եղբարք։ Սոքա դատ բացին Պանքային դէմ, որ յիշեալ 71,000 ոսկին իրենց հաշուոյն էր անցուցած։

Պանքան կը կրթնէր անգլիական օրինաց այն տրամադրութեան վրայ թէ անգոյ անուն մը վրայ քաշուած փոխանակագիր մը ոչինչ է, և կը փաստաբաներ թէ քանի որ Կլիքայի չինած փոխանակագիրք կեղծ էին, անգոյ անունց վրայ չինուած փոխանակագրերու հանմանմն պէտք է նկատուին, և հետեւապէս Պանքան պատասխանատուութենէ զերծ պէտք է բրնուի։ Վայլիանո Եղբարք կը պատասխանէին թէ Կլիքայի փոխանակագրաց մէջ յիշուած անուանք անգոյ չեն։ իրենց հետ գործեր ընող սեղանաւորներու և վճառականներու անուանք են։ հետեւապէս օրինաց այն տրամադրութիւնն արդի պարագային չի վերաբերիր։ Նախնական դատարան այս տեսութեան համամիտ գտնուելով, զՊանքան դատապարտել բովանդակ վնասը կրելու, եւ դատին ծախքը վճարելու։

Շատ մը իրաւագէտներ տարբեր կը խորհէին այս մասին, և անոնց խորհրդով Պանքան վերաքննութեան դիմեց՝ սկզբունքի կարեւոր կէտ մը որոշել տալու։ Յետ երկար դատավարութեան, Վճռաքննիչ Ատենին հինգ դատաւորք եւս իրաւունք տուին Վայլիանո Եղբարց, հաստատելով նախնական դատաւոր Լորտ Ճըսթիս Զարլզի վճիռը։ Միայն նախագահն համամիտ չգտնուեցաւ։ Լորտ Ճըսթիս Քոթիզն վճռագիր մը կարդաց, որուն համեմատ Կլիքայի չինած փոխանակագրաց մէջ յիշուած անձինք անգոյ կամ չինծիր չեն, և Վայլիանոյի տունը պատասխանատու չի կրնար լինել իւր անուան չարաչար գործածուելուն։ Ինչո՞ւ համար Պանքան պէտք եղած զգուշութիւնն ի գործ չէ դրեր, և Կլիքայի պէս իրեն անծանօթ օտարականի մը այնպիսի մեծ գումարներ յանձնելէ է կրյր վտանգութեամբ։ Այս անփութութեան շնորհիւ միայն կարելի եղած է նենգութիւնն և նենգաւորն անմիջապէս չի բռնուած և պատժուած։ Պանքան իւր դրամը տուած էր անխորհրդաբար, արտասովոր կերպիւ, և այժմ կ'ուզէ իւր վնասը տուժել տալ ուրիշի մը (Վայլիանո տան) որ պակասութիւն մը չունի, և հետեւապէս այս վնասը կրելու չի կրնար դատապարտուիլ։

Այս անգամ եւս Պանքան դատապարտուեցաւ։ դատական ծախքերը վճարելու, և թէպէտ Պանքային փաստաբանք վճռագրոյն յետաձգումը խնդրեցին Վճռաբեկ Ատենին (Լորտերու դատարանին) դիմելու։

—)(74)(—

ԹԵՐԹՕՆ ԱՐԵՒԵԼՔԻ

ԱԼԵՔՍԱՆԴՐ ՏԻՒՄԱ

ՖԷՐՆԱՆՏ

Հազիւ խորհած էի այս մասնութիւնն, երբ պատժուեցայ ճակատագրային գաղտնիքին երեւան ելնելովը։ Ցայնժամ, Մոռիս, ամէն բան վերջացաւ անդառնալի որոշում տուի ա՛ք քայլ մը յառաջ չառնելու, հոն մնալու ուր որ էի։ Ասոր համար, Մոռիս, կ'երդնում ձեզ, քիչ մը առաջ մինչեւ արտիս խորը սարսռացի, սրբասաւիս սարսռացի մինչեւ էութեանս խորքն երբ Պ. ոը Մոնժիռու եկաւ ինձ ընծայել իր ձեռքն, իր անունն, իր հարստութիւնը։ Կը հասկնա՞ք, ես, Մոռիս, ձեր հօրը կինն։ ես, Ֆէրնանտ, Մոնժիռու կոմսուհի՛։ Եւ սակայն, Մոռիս, մտրտիկ ըրի այս ամէնը սրտաբեկ, այլ հանդարտ դէմքով, որովհետեւ տխուր և արգահատանաց արժանի բան մը կը տեսնէի ծերունւոյ մը այս սիրոյն մէջ, որուն վերայ աշխարհ պիտի խնդար դուցէ, սէր այնչափ մեծ, այնչափ բացարձակ որ կամ՝ սին պէս մարդու մը անցնիլ կուտար, մարդու մը որուն համար աշխարհի կարծիքն անփոփոխելի կողմնացոյց մը եղած է միշտ, զինքն ինձմէ բաժնող հեռաւորութիւնը։ Օ՜հ, Աստուած իմ, Մոռիս, շատ լաւ գիտեմ, և ցաւալի է ըսել, որ աշխարհի մարդոց համար, որք այնքան խստապահանջ են երբ խնդիրը պատշաճութեան օրէնքներուն վրայ է, մեծնչութիւնը գոյութիւն ունի եթէ պայմանագրով մը, եթէ քաղաքային կամ կրօնական արարողութեամբ մը պայմանաւորեալ է, զի իրենց մէջ ընութեան օրէնքին փոխանակ ընկերային պայմանագրութեանց օրէնքը գոյութիւն ունի։ Բայց ես, Մոռիս, ես, ներեցէք ինձ այս բառը, վիրաւորուած զգացի ամօթիածութիւնս, և դուք իսկ, ձեր լքումն և վհատութիւնը ցոյց կուտայ թէ դուք ալ ինծի պէս կ'ըզգաք։ Գլուխնիս խոնարհեցնենք և սկսինք, դուք, Մոռիս, երջանկութեան ապագայ մը, ես՝ քաւութեան ապագայ մը։— Այս երջանկութիւն բառին վրայ գլուխդ մի՛ թոթուէք, Մոռիս։ ձեր տարիքին մէջ, երջանկութիւնն այնպիսի գործ մ'է որուն դիւրին է արարիչն ըլլալ, արձան մ'է որուն ամէն մարդ Պիգմալիոնը կրնայ ըլլալ, իր հաճոյքին համեմատ զայն ձեւակերպելէ յետոյ։

Հառաչ մը թաւ երիտասարդին ճնշուած կուրծքէն։ Իր նայուածքն անթարթ ու տարտամ եղած էր, խորին ուժաթափութիւն մը յաջողած էր կրքին սաստկութեան։ Ֆէրնանտ առաւ նորա ձեռքը զոր սրտին վրայ կծկուած բռնած էր՝ գոգցես անդ ճնշելու համար կիզիչ ցաւ մը, եւ խորհելով որ պէտք էր հանել զինքն այս վիճակէն, նոյն իսկ ցնցումով մը։

—Այսպէս ուրեմն, Մոռիս, ըսա՝ դարձուածքով մը իր նպատակէն հասնելով, ա՛լ ներելի չէ մեզ դեռեւիլ այն ճամբուն մէջ զոր առաջադրած ենք մեզ համար։ Աստուած ոճիր մը դրաւ մեր ետին որպէս զի ա՛լ չանցնինք նոյն ճամբէն, եւ թերեւս օր մը իրր իր բարութեան հաւաստիքը պիտի նկատէք զոր ինչ այսօր կը կարծէք իբր իր բարկութեան մէկ արտայայտութիւն։ Մոռիս, ըսի ձեզ արդէն, մեր երկուքին դուք էք առանձնաշնորհեալ էակը, եւ այս բանին համար շնորհակալ կ'ըլլամ երկնից, որովհետեւ ձեզ մեծ ունիք, պատրաստ ի վերածնիլ, այն զգացումն որ յաւէտ մեռած կը թուէր ձեզ ձեր սրտին մէջ։ Ո՜հ, Աստուած իմ, դեռ չէք գիտեր մեր մարդկային խեղճ սրտին յոդոգդոյութիւնը։ Մոռիս, հաւատացէք կնոջ մը խօսքին։ Քլոթիլտ շատ մանկամարդ է, Քլոթիլտ շատ դեղանի է, Քլոթիլտ ամէն հանդամանքներն ունի սիրուելու համար։

—Այո՛, գոչեց Մոռիս, այո՛, գիտեմ այս ամէնը։ բայց Քլոթիլտ արձան մըն է, Քլոթիլտ առանց կրքի մանուկ մըն է, Քլոթիլտ չիրեր։

Թուեցաւ Ֆէրնանտի թէ երկրորդ հեծեծիւն մը կը լսէր։ Վերտին չորս կողմը նայեցաւ, բայց ըստ որում ոչ ոք տեսաւ, եւ, մանաւանդ, իր բոլոր ուշադրութիւնն իր գործին նուիրած, շարունակեց։

—Այս ամէնը ճշմարիտ էր երէկ, Մոռիս, բայց այսօր սխալ է։

—Ի՞նչ կ'ուզէք ըսել, գոչեց երիտասարդը։

—Սա թէ երէկուընէ ի վեր արձանը ոգեւորուած է, թէ, երէկուընէ ի վեր, մանուկը կին եղած է, եւ կինն ալ նախանձոտ։

—Նախանձո՞տ, Քլոթիլտը, նախանձո՞տ, ըսաւ Մոռիս դառն չեչտով մը, զի անձնասիրութիւնն ա՛նքան խորամտ զգացում մ'է մարդուս սրտին մէջ։ Իրօք, եթէ Քլոթիլտ կը նախանձի, ինձմէ ըլլալու չէ։

—Կը սխալիք, Մոռիս, ձեզնէ կը նախանձի, և շնորհակալ եղիք Աստուծոյ որ այս զգացումը դեռ երկի եկաւ անոր սրտին մէջ, որովհետեւ ո՞վ գիտէ, Մոռիս, եթէ իր սիրուն երեք ամսէ ի վեր զգար ինչ որ կ'զգայ երեկուընէ ի վեր, ձեզ համար ինչ անդարմանալի թշուառութիւններ յառաջ կրնային գալ ազկից։

—Ի՞նչ կ'ուզէք ըսել, հարցուց Մոռիս Բացատրեցէք, Ֆէրնանտ, որովհետեւ չեմ հասկնար զձեզ։

—Աստուա՜ծ իմ, ըսաւ Ֆէրնանտ, այրերն ի՛նչ տարօրինակ կերպով կոյր են։ Զէ՞ք հասկնար, Մոռիս, թէ երիտասարդ, գեղանի և լքեալ կին մը։ . . .

—Ֆէրնանտ, գոչեց Մոռիս, կը կասկածէ՞ք Քլոթիլտի վրայ։

—Ոչ անշուշտ, Աստուած չքնէ, պատասխանեց մանկամարդուհին։

Ցեւտոյ, ըստ որում Մոռիս մոատանջ կեցած էր, յօնքերը պռստած։

—Մարիկ ըրէք ինձ, բարեկամս, ըսաւ։ ձեզի ըսելիքս շատ փափուկ կէտ մըն է, բայց պիտ ակամայ բերին ձեր տունն, հոս եկած եմ ամենուդ բերելու հանդարտութիւն, և, եթէ կրնամ, երջանկութիւն։ Ներեցէք ինձ ուրեմն մինչեւ ձեր ընտանեաց սրբարանը մտնել, Մոռիս։ ձեր երջանկութիւնը սիրելի է ինձ։ կ'ուզեմ որ, որպէս անցելոյն, նոյնպէս և ապագային մէջ զերծ ըլլայ եթէ ոչ ամէն փորձութենէ, դէթ ամէն կասկածէ։ Էկ լաւ Մոռիս, ձեր երջանկութիւնն անխորհրդաբար վտանգի ենթարկած էք։ իբր անխոհեմ խաղացող մը որ իր ամբողջ հարստութիւնը կը դնէ մէկ քուեայի վրայ։

Երիտասարդը գլուխը վեր առաւ այս խօսքերուն եւ նայուածքը շողշողաց։ Ֆէրնանտ սրտին նշան առած եւ լաւ զարկած էր։ տեսաւ զայս եւ ուրախացաւ։

—Ֆէ՛րնանտ, ըսաւ Մոռիս, ի՞նչ կը նշանակեն այդ խօսքերը։ Խօսեցէք։ Բա՞ն մը ունիք ինձ իմացնելիք։ Քլոթիլտի վրայ կը խօսէք։ խորհեցէք թէ իմ անունս կրող կնոջ վրայ կը խօսէք։

—Այո, անոր վրայ կը խօսէի, Մոռիս, եւ կը փութամ ըսել թէ չար խորհրդոյ մը ստուերն անգամ նսեմացուցած չէ նորա ճակատը։ Բայց գիտէ՞ք թէ ձեր լքումն ընդհանուր չսիրելի խանդաբէ իր հոգւոյն սրբութիւնը, թէ զինքը պատող անմեղութեան ամպն, նման այն գլորշեաց որովք կը շրջապատուէին Նախնի դիցուհիներն՝ իրենք զիրենք անտեսանելի ընելու համար մարդոց աչերուն, տակաւ առ տակաւ չպիտի յօդս ցնդի ներքին թելադրութեանց շնչով։ Նախանձը չար խորհրդատու է, Մոռիս։ Ձեր օրինակն իրեն արդարացուցիչ պատճառ բրնելով, թերեւս առաքինութիւնը պիտի նկատէ իբր դիւրահաւանութիւն մը, եւ ոմիրն՝ իբր վրէժխնդրութեան արտայայտութիւնը։

—Ո՜հ, այդ օրինակ գաղափարներ բրնաւ չպիտի անցնին Քլոթիլտի մտքէն, դոչեց Մոռիս։

—Այո՝ սակայն երբ այս գաղափարները չանցնին այն լքեալ կանանց մտքէն, որք պէտք եղածին չափ հաւուն չեն զայն ինքնին յղանալու համար, հաւատացէք ինձ, Մոռիս, միշտ մէկը կը գտնուի որ անոնց միտքը ձգէ այդ գաղափարները։

—Ֆէրնա՜նտ, Ֆէրնա՜նտ, գոչեց Մոռիս, զգուշացէք։ այս վայրկենիս աչերս չորս դին կը պտտցնեմ և կը մտածեմ այն մարդն որուն կ'ակնարկէք։

—Կը սխալիք, Մոռիս, յարեց Ֆէրնանտ աշխուժիւ որ կը վախնար զի Մոռիս իր փափաքածէն աւելի հեռուն երթար։ Ոչ զոք մատնանիշ ընել ուզեցի, ենթադրաբար խօսեցայ, ընդհանուր գաղափարներու վրայ խորհրդածեցի։

—Օ՜հ, չարունակեց Մոռիս, վա՛յ անոր որ մինչեւ իսկ յոյս մը ունեցած ըլլայ, որովհետեւ կ'երդնում ձեզ, Ֆէրնանտ, որ այդ յոյսն, եթէ իր սրտէն ալուցը մէջ պահած չըլլայ զայն, կեանքովը պիտի վճարէ։

—Բայց կը մտնաք, Մոռիս, թէ այն մարդը որուն կ'սպառնաք, դուք ինքնիդ էք։ յանցաւորը դուք էք եւ ոչ ուրիշ ոք։ Աստի միշտ այսպէս պիտի ըլլայ, եւ ձեր, երիկ մարդոցդ եսասիրութիւնը միշտ պիտի արգիլէ ձեզ լրջութեամբ դատել ձեր յառաջ բերած կացութիւնները։ Դուք այնքան ուղիղ, այնքան արդար, Մոռիս, կարելի՞ է որ մէկ պարագայի մէջ չհասկնաք ձեր անիրաւութիւնը։

(Շարունակեն)

համար, բայց Վհռաքննիչ Ատեանը մերժեց այսպիսի յետաձգում։

Լոնտոնի մեծ լրագիրք, այս վճռոյ վերայ խօսելով, կ'ըսեն թէ անգլիական օրինաց այս կերպ մեկնութեամբ (էքսթրէմոն») սեղանաւորաց գործը կը դժուարանայ, քանի որ՝ եթէ իրենց վճռաւմերը մեծաւ զգուշութեամբ չկատարեն՝ վնասն իրենց վրայ կ'ինայ։

Վայլիանս եղբարք լատոյական թերութենէ զերծ չեն նկատուիր, քանի որ յոյժ կարեւոր և ընդարձակ գործի մը մէջ, որ կարի վստահելի պաշտօնեայ մը կը պահանջէր, կը գործածէին չնայլ և ցոփակեաց երիտասարդ մը, որուն գոհացուցիչ ամսական մ'ալ չէին տար։ Բայց Պանքային պակասութիւնն աւելի մեծ կը համարուի։

ԱՐՄԱՏԱԿԱՆՔ ԵՒ ՊԱՀՊԱՆՈՂԱԿԱՆՔ Ի ՍԵՐԲԻԱ

Զալաթիոյ լրագիրք Հավասի հետեւեալ հեռագիրը կը հրատարակեն անուշղակի աղբիւրէ։

«Պելիգրատ, 25 մայիս։—Այս առաւօտ, Պ. Կարաշանիեի պահպանողական կուսակցութեան պատկանեալ դիպուած մը, որուն 1,500 անձինք ներկայ էին, տեղի կ'ունենար դարբէլիատան մը պարտիզին մէջ, երբ շատ մը ուսանողք և երիտասարդք պաշարեցին բընակարանն՝ անպատշաճ ցոյցեր ընելով։ Պահպանողականք պատասխանեցին։ Ոստիկանութիւնը միջամտելով, ցերուեց ամբոխն, որ երկու հատուածներու բաժնուեցաւ։ մին դնաց Պ. Կարաշանիի տան առջեւ, միւսն ալ Քազինոյին առջեւ, ուր սովորաբար կը գումարուին Պահպանողականք։ Կառավարական ազդու տնօրինութեանց շնորհիւ, բարեկարգութիւնն այժմ վերահաստատեալ է։»

ՅՈՒՆԱՍՏԱՆ

Յունաստանի սկրան իշխանուհին, Ալեքսանդրա, անդրանիկ իշխանուհին զոր վերածնեալ Յունաստան կ'ամուսնանէ օտար իշխանի մը հետ, ընծայներով կ'ողողի Զարին Փաւել եղբօր հետ իւր մօտաւոր ամուսնութեանն առթիւ։

Երէկեալ յոյն մեծատուն Պ. Ա. Սինկրոս համակրելի իշխանուհւոյն նուիրեց Աստուածաշունչ մը գեղարուեստական մեծ ճաշակով կազմեալ և թանկագին ադամանդներով պճնեալ։ Տիկնայց Սիլլոյսն եւս նմա նուէր զրկեց ընտիր գորգ մը՝ Տիկնայց աշխատանոցին մէջ բանուած՝ անխտիր թէ՝ ազքատ և թէ հարուստ դասուց պատկանեալ աշակերտուհեաց ձեռամբ։

Պ. ԿԱՎԱՆ

Ֆրանսայի ժիւրա դաւառին Ռուզանս քաղաքին մէջ 53 տարեկան մեռաւ Ֆրանսայի ճարտարագէտն Պ. Կաւան, որ ի Փորթուկալ և ի Վենեզուելա երկաթուղեաց յատակագծեր շինելէն ետքը, Կ. Պոլիս եկած և հանրային շինութեանց նախարարութեան տրամադրութեան ներքեւ աշխատած էր։ 1871ին Բերայէ ի Ղալաթիա թիւնէլին արտօնութիւնն ստացաւ, զոր Ֆրանսական ընկերութեան մը չկրնալով յանձնել, ի Լոնտոն անգլ. դրամատերաց խմբակի մը յանձնեց 5,000 անգլ. ոսկւոյ, բաժնեթղթերէն մաս մը իրեն վերապահելով, նմանապէս ստանձնելով թիւնէլին շինութիւնն 200,000 ոսկւոյ։ Հաւատ և անչափ խնդիր գիտնական մէր Պ. Կաւան։

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Վսեմ. Արիկ էֆէնտի Ունճեան, հինգշաբթի երեկոյ կայսերական պալատն երթալով, յանուն Ազգ. Կեդր. Վարժարանի Խնամակալութեան շնորհակալեաց ուղերձ մը մատոյց առ Վսեմ. Հաճի Ալի պէյ, Վեհ. Սուլթանին մատուցելու համար։ Վսեմ. Հաճի Ալի պէյ այս առթիւ յայտնեց Վսեմ Ունճեան էֆէնտիին թէ Ազգ. Կեդր. Վարժարանի կողմէ կատարուած հաւատարմական ցոյցը բարձրագոյն գոհունակութեան արժանացած է։

Կրօնական ժողովոյ որոշմամբ Բ. Հիսարի եկեղեցւոյն քարոզիչ կարգուած է Արժ. Սահակ վարդապետ Նաղարեթեան, փոխանակ Արժ. Յովսէփ վարդապետ Սարաճեանի։

Նիկոմիդիոյ ազգային հանդանակութեան ձեռնարկած են՝ ի նպաստ վերաշինութեան Ս. Փրկչեան Ազգ. Հիւանդանոցի։

Բերայի կառավարչութեան կողմէ թուրք լրագրաց մէջ հրատարակեալ ազգ մը Ֆերիդիւլի ազգ. եկեղեցւոյն գոլորշեան դէպքը պատմելով ճշդիւ, կ'ըսէ թէ եկեղեցւոյն չէնքը խարխուլ վիճակի մը մէջ ըլլալով՝ այս մասին տեղեկագիր տրուած է թաղապետութեան։

Վաղը, հինգշաբթի, Ս. Համբարձման տօնին, Բուժէլի Հիսարի քարոզիչ Արժ. Յովսէփ Ծ. վրդպ. Սարաճեան իւր յանձքիկա ուղեւորութեան առթիւ պատարագ պիտի մատուցանէ գլուխն Ս. Յանդուխտ եկեղեցւոյն մէջ, և իւր հրաժեշտի օրհնութիւնը պիտի տայ։ այս առթիւ նաև պիտի օծուին այն եկեղեցական անօթք որք յատկապէս Ամերիկայի համար պատրաստուած են։

Զարլուի Ազգ. վարժարանին վերաշինութեան համար բացուած հանգանակութիւնը մուտքով յառաջ կը տարուի։ Շինութեան յանձնաժողովը կը խնդրէ մեզմէ ծանուցանել թէ Զարչըլը խանի վաճառականներէն Մեծ. Յարութիւն էֆ. Աւետիսեան, շինութեան պաստամատոյց անձանց տալու համար հարկ եղած ընկալագրերն ամենիս տեսակէն պատրաստել տալով, հաճած է նուիրել, որք 2 Օսմ. ոսկիէ աւելի արժողութիւն ունին։

Եէնի-Գարուի Մէշտուտեան երկսեռ վարժարանի մի քանի աշակերտուհիք իրենց մէջ 60 դրչ. հանդանակելով ի նպաստ Սրբուհի Մայրապետին, խմբագրութեանս զրկած են։

Մեծ. Արիկ Լիֆէնտի Գէորգեան, հայր Աբիկեան Միհրան էֆէնտիի, յետ կարճատեւ հիւանդութեան նախընթաց երեկոյ կնքեց իւր մահկանացու կեանքն ի հասակի 60 ամաց, ի խոր և անմխիթար սուգ թողլով իւր որդիքն և ընտանիքն։

Յուղարկաւորութեան հանդէսը տեղի ունեցաւ երեկ ժամ 9 ին վայելուչ չքով։

ՀԱՄԲԱՐՁՄԱՆ ՏՕՆ

Յառաջիկայ հինգշաբթի օր, Տեառէն մերոյ Համբարձման տօնի առթիւ, Նորին Բարձր Սրբազնութիւնն՝ Ամենապատիւ Տ. Խորէն Սրբազան Պատրիարք Հայրն, հանդիսաւոր Ս. Պատարագ պիտի մատուցանէ ի Ս. Փրկիչ եկեղեցւոջ, վասն հոգւոց հանգուցելոց հաստատութեանս մեծատուն Հիմնադրին՝ Պէշճեան Յարութիւն Ամիրայի, նաև Տատեանց, Պալեանց և այլոց բարերարաց։

Արդ՝ ներկայիս կը հրաւիրուին բարեպաշտ ազգայինք նոյն աւուր կը-բօնական հանդիսին ներկայ գտնուիլ ի մխիթարութիւն պատսպարելոց։

Ի Դիմաց Հոգ. Սգ. Հիւանդանոցի

Ա.ԹԻՆԱՊԵՏ Ա.ԹԻՆԱՊԵՏ

ՏԻԳ. ԿԻՐԱԿՈՍ ՄԻՒՐ. ՅԱԿՈԲԵԱՆ

ԺԱՄԱՆԱԿԱՒՈՐ ԵՐԹԵՒԵԿՈՒԹԵԱՆՑ

ԵՐԹ. — Առաւօտ Սիրքէ-Ճիէն

ԸՍՏ ԵՒՐՈՊԱՑՒՈՅ Թիւ	Ամսոյ	Թուականի		ԸՍՏ ՏԱՀԿՈՅ Ամսոյ	Թուականի
12	8	30	Գուամբրա. (Եէնի-գր.)	1	
14	9	—	Սամսթիա. (Եէտիգլ.)	1	30
16	9	31		2	1
18	10	23		2	53
20	11	20		4	

ԴԱՐՁ. — Երեկոյ Եէտի-գուլէն

Ժամը 5.49ին մինչեւ 11.40 տասն չորեկեսաւ կայ Եէտի-գուլէն Սիրքէճի երթալու համար։

ԱԶԴ.—Վերոյիշեալ հինգ կառախումբերէն զատ 14 կառախումբ եւս կան, որք Սիրքէճիէն կը մեկնին և մինչեւ Եէտի-գուլէ կ'երթան, իսկ հանդիսավայր, ոչ։

«ԱՐԵՒԵԼՔ» չպիտի հրատարակուի վաղը՝ Համբարձման տօնին առթիւ։

ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԵԱՆՑ ՆԱԽՆԵՑ

(Դաբ Դ—ԺԴ)

Հ. Դարեգին Զարպհանէլեան, ի Մխիթարեան Ուխտէն Վենետկոյ, հեղինակ «Հայերէն դպրութեան երկհատոր Պատմութեան», այս օրերս ի լոյս ընծայեց ուրիշ կարեւոր գործ մը, նախնեաց հայկական թարգմանութեանց վրայ պատմական առձեռն դիտուած ամէն ծանօթութիւնները պարունակող հմտալից երկ մը, միջին դիրքով 783 էջէ բաղկացեալ։ Չորրորդ դարէն մինչեւ ԺԳ դար մեր երջանկայիշատակ նախնեաց բրած թարգմանութիւնները կը պատմէ՝ համեմատելով ազգային և օտար աղբիւրներէ այս մասին տրուած ամէն ծանօթութիւններն և բաղդատելով ի վկայութիւն կոչելով ամէն հայագէտներէ։

Այս երկ մասնաւոր շահեկանութիւն մ'ունի այժմ, քանի որ Աստուածաշնչոյ գրաբար թարգմանութեան նոր տպագրութեան խնդիրը կայ հրապարակին վրայ,— թարգմանութիւն մը որոյ վրայ տրուած ծանօթութիւնք Հ. Դարեգինի գործին մէկ կարեւոր մասը կը կազմեն։

Ամէն հայասիրաց և բանասիրաց մատենադարանին անհրաժեշտ զարդերէն մին պէտք է լինի այս կարեւոր գործ, արդիւնք բազմամեայ մանրակրկիտ խուզարկութեանց որ պատիւ կը բերէ հեղինակին և Մխիթարեան Ուխտին ընդհանրապէս։ Դին 5 ֆրանք։ Կեդրոնատեղին է Մխիթարեան գրատուն Վենետկոյ Միաբանութեան ի Սեղբոս Խան։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ՊԱՇՏՕՆԱԲԱՇԽՈՒԹԻՒՆՔ

Ատանայի Թարսուս գաւառակին գայմագամ անուանուած է Հաճընի գայմագամ Թէվֆիգ պէյ։

Հաճընի գայմագամ անուանուած է Ազիզիյէի նախկին գայմագամ Մահիր էֆէնտի։

ՊԱՏԳԱՄ

Զմիւռնիոյ Մէնէմէնի գաւառակին Նայալին կողմէ պատրաստեալ որոշմագրոյ մը համաձայն Բամազան ամիսն անդ սկսած է երեքշաբթի օրէն։ Այս որոշմագիրը, որ մայրաքաղաքս զրկուած է, Պոյոյ Դատաւորին կողմէ վաւերանալով մատուցուած է Վեհ. Սուլթանին։ Հետեւաբար ըստ այդ որոշմագրոյ Բամազան ամսոյ 30 օրն ամբողջացած համարուելով, այսօր Արիֆէ է և վաղն հինգշաբթի կ'սկսի Պայրամի տօնը։

ԻԲ. ԴՈՒՌՆ

Ռումանական նոր դեսպան Պ. Միրդիլիսէօ դեսպանատան առաջին թարգմանին հետ երէկ Բ. Դուռը գնաց և Արտաքին գործոց Նախարարութեան խորհրդական Վսեմ. Յարութիւն փաշայի։

—Ռուսական դեսպան Պ. Նէլիտով և իտալական դեսպանատան գործակատարն երէկ Բ. Դուռն երթալով յաջողագրաւ տեսակցեցան Բարձր. Մեծ-Եպարքոսին և Արտաքին գործոց Վսեմ. Նախարարին հետ։

ԹՈՒՐԲԻՈՅ ԵԼԵՒՄԻՏԸ

Լ. Հերբերտ հետեւեալ հատուածը կը հրատարակէ իւր խմբագրականին մէջ։

Բամազանի վերջին շաբաթը նշանակութեան արժանի դէպքեր չպարունակեր սովորաբար։ Երկար տարիներ, այս եօթն աւուրց շահեկանութեան գլխաւոր առարկան էր գիտնալ թէ ինչպէս պիտի հայթայթուէր Պայրամի ծախսուց համար հարկ եղած դումարն։ Այս տարի այդպիսի բան չիկայ։ Տէրութեան դանձը պէտք եղածին չափ պատրաստ դրամ ունի իր անմիջական պէտքերուն համար և նոր կայ տարւոյն հասութից վրայ կանխաւ դրամ առնուած չէ։ Անցեալ տարի, արքունի Գանձն այսչափ լաւ վիճակի մէջ չէր, և վերջին վայրկենին Վոսփորի նաւարկութեան Ընկերութենէն կանխավճար մը առնուեցաւ Պայրամի ծախսուց համար, կանխավճար որ, աւելորդ է ըսել, ճրիտարար չտրուեցաւ։ Ուստի գոհունակութեամբ կը հաստատենք երմտական կացութեան բարւոքումն, և ուրախալի է գիտնալ թէ ոչ միայն կարելի է պահել այս բարւոքումը, շնորհիւ տէրութեան արդի հասութից իմաստուն և ճարտար յանձնումն մը, այլ և, եթէ օրինաւորութեամբ վարուի, այս հասոյթք առատօրէն կը բաւեն սովորական ծախսուց և մինչեւ իսկ կրնան յաւելեալ դումար մը թողուլ։

ԱԼԻ ՆԻԶԱՄԻ ՓԱՇԱ

Թէեւ երկուշաբթի օրը թուրք լրագիրներէ առնելով մեզ հետ բոլոր տեղական լրագիրք ծանուցին թէ Ալի Նիզամի փաշա Պերլինէն մայրաքաղաքս վերադարձած է, սակայն թարմ իւր այս աւուր թուով կը ծանուցանէ թէ Ալի Նիզամի փաշա և իւր հետեւորդք տակաւին Վիեննա կը գտնուին և հարիւ մէկ քանի օրէն մայրաքաղաքս պիտի վերադառնան։

— —

ԷՍՍԱՏ ՓԱՇԱ

Փարիզու օսմանեան դեսպան Էսատ փաշա, որ արձակուրդով մայրաքաղաքս կը գտնուի, հրաման ստացած է Պայրամի երրորդ օրն իւր պաշտօնատեղին ուղեւորիլ։

— —

Ս. ԴԵՐԵՁՄԱՆԻ ՎԱՆՔՆ Ի ՖԷՆԷՐ

Ֆէնէրի Յունաց Ս. Գերեզմանի վանքը քանի մը օրէ ի վեր պաշարման վիճակի մէջ դրուած է։ Ո՛չ ոք կրնայ մտնել հոն, ո՛չ ոք դուրս ելնել։ Բոլոր դռները փակուած են և խստութեամբ կը պահպանուին։ Լա թէ՛ էլ, այս իրողութեան բացատրութիւնը կուտայ։

«Իբր շաբաթ մը առաջ եպիսկոպոս մը և երեք վարդապետ Երուսաղէմէն Կ. Պոլիս հասան և այդ վանքն իջան։ Կ'երեւայ թէ հոս կուսակալին կառավարութեան մօտ ձեռնարկներ ընելու ընդդէմ իրենց պետին, Երուսաղէմայ Պատրիարքին։ Ն. Ամենապատուութիւն, զայս լսելուն պէս, հեռագրեր է Բ. Դրան և խնդրեր է ասոնց արգիլուն այդ վանքին մէջ։ Այդ է տհա Ֆէնէրի վանքին պաշարման վիճակի մէջ դրուելուն պատճառը։»

— —

ՇԵՊՐԹԱՑ ԿԱՌԱՒՈՒՄԸ ԴԵՐՄԱՆԻՈՅ

Պերլինէ կը ծանուցուի թէ արեւելեան առաջին ճեպընթաց կառախումբը (Պերլին, Պուտապէշթ, Կ. Պոլիս, առանց Վիեննա հանդիպելու) պիտի մեկնի յառաջիկայ յունիս 5 ին։

ԵՐԿԱԹԱԳԻՐԸՈՒԹԻՒՆ

Ինչպէս կը յիշուի, Վեհ. Սուլթանին հրամանաւ օսմանեան մէկ քանի դաւառները մայնագէտներ զրկուած էին երբեւ երկրագործական քննիչ, որպէս զի Թուրքիոյ մէջ երկրագործութիւնը նորագոյն կատարելագործութեանց համաձայն ի գործ դրուի, և թէ Ն. Վեհափառութեան հրամանաւ երեք տարի առաջ երեք պաշտօնեայ Գերմանիա զրկուած էին երկրագործութեան արհեստն ուսանելու համար։

Արդ, այդ պաշտօնեայք, որք երկրագործութեան ուսումն աւարտելով մայրաքաղաքս վերադարձած էին, իրենց երկրագործական քննիչ Հալէպի, Կարնոյ և Մանասդրի նահանգները պիտի զրկուին տիպար—արտեր հաստատելու համար։

— —

ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԴԵՍՊԱՆԱՏԱՆ ՎԱՃԱՌԱՒԱՆԴԷՍԸ

Ի Նպաստ Բերայի գերմանական հիւանդանոցին՝ գերմանական դեսպանատան մէջ կազմակերպեալ վաճառահանդէսը մեծ յաջողութեամբ պսակուեցաւ։ Շաբաթ և կիրակի այցելուաց խուռն բազմութիւն կար դեսպանատան սրահներուն մէջ։ Տիկին Բատովիճ բացած էր գլխաւոր դրամատեղանին առջեւ։ միւս սեղաններուն առջեւ կը գտնուէին գերմանական գաղթականութեան տիկնայք, աջակցութեամբ դեսպանատան պաշտօնէից։ Վեհ. Սուլթանը 50 ոսկւոյ նուէր մը զրկած էր։ Միմիայն շաբաթ աւուր հասոյթին եղած է 300 ոսկի։

— —

ՊՈԼՍԷՆ Ի ԲԱՐԻՋ ՀԵՏԻՈՅՆ

Սամսթիացի ձկնավաճառ Արթին անուն Հայ մը, Աբուլեսատանդէսը տեսնելու համար հետիոտն Բարիզ երթալու մտադրութիւն յայտնած ըլլալով, Սիրքէճիի երկաթուղոյ տնօրինութիւնն իր մտադրութիւնն է ցոյն, հասնելու համար թէ ճշմարիտ է իր այդ մտադրութիւնն, Արթինի հաստատական պատասխանին վրայ, տնօրէնութիւնը նամակներ տուած է նմա գծին ամէն կայարանապետներուն համար, որք կը հրաւիրուին Արթինի կերակուր տալ մէկ կայարանէ ի միւսն և երկու ֆրանք ալ դրամ։

Վեհ. Սուլթանին հրամանաւ, ի Պոլիս Սողոգ Զէյտէի թաղը կառուցեալ երկու աղբիւրներու շինութիւնք աւարտած լինելով երէկ իրիկուն առաջին անգամ ջուր բաշխուեցաւ հարիւրաւոր անձանց որք սափոր ի ձեռին կ'սպասէին։ Աղբիւրներն այս առթիւ լապտերներով լուսազարդուած էին։

—Յայտնի է թէ Շէյխ-իւլ-Իսլամի Դուռը մաս առ մաս կը նորոգուի։ Այդ Ֆէթվավանէի նորոգութիւնն եւս աւարտած է և այժմ ի նորոյ կառուցուիլ սկսուած է գրատուն մը, պահկանոց մը և որբերու ու այրիներու ամսաթոշակաց համար գանձատուն մը։

—Սպարապետի Դրան առողջապահական ճիւղն դեր-նախագահ Ֆէրիդ Սալիհ փաշա կայս. հրամանաւ մէկ ու կէս ամսուան արձակուրդ ստացած է Պրուսա երթալու, ի դարմանումն իր հիւանդութեան։

—Պոլսոյ կառավարիչ Իսմայիլ Քէմալ պէյ, որ քննական պատճառ մը կը կատարէ, այժմ Երէյլի կը գտնուի, ուր ձեռնարկուած մը հետ բանակցելու վրայ է Յերէյլի նաւահանգիստ մը շինելու համար։

—Ոստիկանութեան նախարարութեան մէջ թէ՛ Ահմէտ Բաղրամ պէյի որդին Ալի Բաղրամ պէյ, որ զինուորական վարժարանին մէջ իւր ուսումն աւարտելով սպայութեան աստիճան ստացած էր, Վեհ. Սուլթանին թիկնապահաց կարգը դասուած է։

—Երէկ ի Պէշիքթաշ Հայոց եկեղեցւոյ փողոցին մէջ հրդեհի սկզբնաւորութիւն մը տեղի ունեցաւ Նիսիմ Էսքանազի անուն հրեայի մը առնէն։ սակայն չորս կողմէ օգնութեան փութալով վտանգին առաջքն առին։

—Պարսկաստանի նախարարներէն Էմին Իւսուէվլէ Իմամ Իւսուէվլէի որդին Իպրահիմ Միրզա երէկ մայրաքաղաքս ժամանեց և Սթէնիսի պարսկական սմարանոցին մէջ հիւր եղաւ։ Իպրահիմ Միրզա մէկ քանի օրէն Հիճազ պիտի ուղեւորի։

—Մայրաքաղաքիս գերմանական երկրորդ հիւպատոսն, որ արձակուրդով Պերլին կը գտնուէր, երէկ ատ ժամանեց։

—Նախընթաց գիշեր տասն երկուքի չափ զինեալ աւազակներ Բեազըտխանէ գիւղին շրջակայ Զամուշքեշի մէջ Պուրկազցի Մօրքոյի բանջարեղենաց պարտիզին վրայ յարձակեցան։ Մօրքօ, իւր պարտիզպանք և անտառապահ մը զենքով իրենք զիրենք պաշտպանեցին, որով երկուստեք բաւական հրաձգէն պարպուեցաւ, սակայն աւազակները կրցան Մօրքոյի հինգ ձիերը յափշտակելով փախչիլ Կուրի միջոցին անտառապահը ձեռքերէն վիրաւորեցաւ։

—Սելանիկի Ֆրանսական նոր հիւպատոս Պ. Լբքէօ, որ կը յաջորդէ դերակոմս է։ ը Գասպէկոն Սէն-Վիգթորի, անցեալ շաբթու իւր պաշտօնատեղին հասեր և պաշտօնին գլուխն անցեր է։

—Պաղտատ կը գրեն թէ Ահմէտ Պէյրի էֆէնտի, որ հանրային կրթութեան նախարարութեան կողմէ անդ զրկուած էր հնագիտական խուզարկութիւններ կատարելու համար ի Թէլլօ և Տիվանիէ, ամսոյս 15 ին մեկներ է անտի ի Պոլիս։ Ահմէտ Պէյրի էֆէնտի իր հետ կը բերէ այս խուզարկութեանց մէջ գտնուած նիւթերը։

—Կայս. Թիկնապահ տեղեկալ-գնդապետ Օսման պէյի երկու տարեկան տղան անցեալ օր յՕրթագիւղ տանը պարտէզին ջուրերը շրջած պահուն աւազանին մէջն ընկաւ և նոյն միջոցին անդ ոչ ոք գտնուելով խեղդուեցաւ։

—Յունաստանի թագաւորը Ս. Փրկչէ արծաթեայ խաչը շնորհեր է Վոլոսի օսմանեան նախորդ հիւպատոս եւ այժմ Պուքրէշի օսմ. դեսպանատան քարտուղար Էմին պէյի։

—Մայրաքաղաքիս անգլիական ընդհանուր հիւպատոս Սըր Հէնրի Ֆաուսէթ այսօր ընտանեօք կը մեկնի յԱնգլիա։

—Անցեալ գիշեր մէկ քանի գողեր ի Սամաթիա Սանճաքար Այրէտտին թաղը Հաճի Մահմուտ էֆէնտիի և ոստիկան Իսմայիլ էֆէնտիի տուները կողոպտելով ոսկի և արծաթ այլ և այլ արժէքաւոր նիւթեր գողցան։ Ոստիկանութիւնն այժմ չարագործները կը փնտռէ։

—Բեազըտխանէի շրջակայքը Ալի Պէյ գիւղին մէջ արջառաց տարափոխիկ հիւանդութիւն մը երեւան ելած է։ Թուրք լրագիրք առ այս Քաղաքապետութեան ուշադրութիւնը կը հրաւիրեն։

—Երէկ մայրաքաղաքս եկան 32 կովկասցի իսլամ գաղթականք որք ուղղակի Պալըքէսէր զրկուեցան անդ բնակութիւն հաստատելու համար։

—Գողութիւնք զարմանալի կերպիւ բազմապատկուած են այս օրերս և գողերուն յանդգնութիւնն ալ չափ ու սահման չճանչնար։ Այսպէս անցեալ ուրբաթ գիշեր Պէյօղլուի Նաւամատոյցին զբօսարանէն գողցուած են... հինգ սեղան հանդերձ իրենց մարմարներով։ Գողերն այս նիւթերը բեռցնելով անդ գտնուած նաւակի մը մէջ, մեկներ են չգիտցուիր ուր։ Նաւակին տէրն երկար խուզարկութիւններէ յետոյ վերջապէս յաջողեր է իւր նաւակը գտնել խղճալի վիճակի մէջ։

ԳԻՏԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

Պ. Ն. Ղ. ՆԵՐՍԷՍԵԱՆԻ

Իւսկիւտարու Ս. Խաչ Թաղի ազգային վարժարանին Լսարանին մէջ այս գիշեր, ի ժամ 1 ½, բնագիտական, ելեկտրական և մագնիսական յոյժ հետաքրքրաշարժ փորձեր պիտի կատարուին։ Արուեստագէտ պարոնն մանաւոր խնամով պատրաստած է բազմաթիւ յաւելուածական խաղեր զորս ցարդ ներկայացուցած չէ յիւսկիւտար։ Ցեսա ներկայացման ելեկտրական լուսոյ միջոցաւ մագական լապտերով ցոյց պիտի տայ մեծ և չքեղ զանազան պատկերներ։ Նաև պիտի հաղորդէ համաւօտ տեղեկութիւն մը ձեռնածուական և այլ փորձերու, որք են երկու տեսակ մաքնիսացում, կախարդական դրամ, բաժակադաշնակ, մագնիսական ժամացոյց, գաղտնագէտ թմբուկ, հնդկական սնոտի եւ տասպրակ և այլն այլն։

Խաղոյց ընդարձակ յայտագիրը պիտի տրուի մուտքի ժամանակ։

ՄՈՒՏՔ 5 ԴԱՀԵԿԱՆ
ՏՂԱՑՈՅ 2½ »

ԶԻՖԹԼԻԿԻ ՊԱՐՏԷԶՆ Ի ՍԿԻՒՏԱՐ

Գարնան եղանակին հետ մէկտեղ վերբսին բացուած է Սկիւտարի այս հմայաւոր պարտէզն, և նորա վարձակալ Տաքէս էֆէնտի սկսած է ամէն ջանք ի գործ դնել՝ այս պարտէզն իւր վաղեմի համբաւոյն արժանի զբօսավայր մը դարձնելու համար։ Այսպէս, վաղուընէ սկսեալ, ամէն ուրբաթ եւ կիրակի, ցերեկ եւ գիշեր, Եգիպտոսէն եկած արաբ նուագածուաց ընտիր խումբ մը պիտի նուագէ եւ երգէ արեւելեան զանազան եղանակներ և երգեր։ խմբին մէջ կը գտնուին նաեւ երկու կին նուագածուհիք եւ երգչուհիք։

Հասարակութիւնը գոհ պիտի ըլլայ նաեւ ըմպելեաց եւ աղանդերներու ընտրութենէն եւ գներու ժանութենէն։

ՕՍՄ. ԿԱՅՍ. ՊԱՆՔԱ

Օսմ. կայս. Պանքային Ղալաթիոյ և Պոլսոյ դրասենեակները փակ պիտի մնան յառաջիկայ հինգշաբթի 18/30 մայիս, Պայրամի և Համբարձման տօնին առթիւ։

ԱԶԱՏՈՎԱԳՐՈՒԹԻՒՆՔ

28 մայիս 1889

Տէր։

Ստորագրեալքս՝ Գրիգոր Մարգարեան և Երուանդ Թովմասեան՝ պատիւ ունիմք ծանուցանել ձեզ թէ Մարգարեան և Թովմասեան ընկերական անուան ներքեւ Հարպուտ և Մէնէնի միացեալ հրդեհի դէմ և Ֆոնտիֆիցիոն ծովային ապահովագրական ընկերութեանց դեր-գործակալութիւնն ստանձնած ենք ի հրապարակիս և պատրաստ ենք կատարել ամէն տեսակ ծովային և հրդեհի ապահովագրական առաջարկութիւնք խիստ օգտաշատ պայմանների։

Լիսայոս թէ՝ պիտի պատուէք զմեզ ձեր վստահութեամբ, յանձնելով մեզ ձեր ապահովագրական գործառնութիւնք, կը ներկայանք ձեզ, Տէր, մեր խորին յարգանց հաւատին։

Պոլիս Պահէք Գրքոյ Շեյխ Իսլիամ Խան Թիւ 10

ՄԱՐԳԱՐԵԱՆ և ԹՈՎՄԱՍԵԱՆ

1—3

ՀԵՌԱԳՐԱԼՈՒՐՔ

(Մասնաւոր հեռագրեր)

Լիւպէք, 27 մայիս

Լիւպէքի (Գերմանիա) նաւահանգստին մէջ մեծ հրդեհ մը ծագեցաւ և երկու միլիոն մարքի վնաս պատճառեց։

Փարիզ, 27 մայիս

Ծերակոյտին թափուր մնացած երկու ամառներուն համար Էն և Տոպս գաւառաց մէջ կրկին ընտրութիւնք կատարուելով, հանրապետական Պ. Լբռու և Պ. Պէռնառ մեծամասնութիւն շահեցան։

ԴՐԱՄԱԿԱՆ

ՂԱԼԱԹԻՈՅ ՊՈՐՍԱ

Ղալաթիա, 17 մայիս
Դահեկան

ԸՆԹԱՑՔ ՓՈԽԱՆԱԿԱԳՐՈՅ

Ց ամիս Լոնտրայի վրայ (Պանքայի)	110	¼
3 » » » (վճռագրեր)	109	7/8
Ց » Բարիզի » (պանքայի)	22	92½
» » » (վճռագրեր)	23	

Օսմանեան Քոնսոլիտէ

Երէկ երեկոյ գոց. (Մարտ. 1. Սերի	18	11
Պօրսային գոցուելէն վերջը »	18	11
Բերայի մէջ »	—	—
Առաւօտուն բացուելեալ »	18	6
Այս օրին »	18	6

ԻՍԹԻԳՐԱՁԻ ՏԱՒԻԼԻ

Երէկ երեկոյ	47	22
Այս առաւօտ	47	26
Այս օր	47	26

ԸՆԹԱՑՔ ԱՐԺԷԹԼԹՈՅ

Փոխառութիւն	Ա. Սերի	29	
»	Բ. »	17	
»	Գ. »	18	6

ԲԱՆԿՆԵՏՈՒՄՔ

Օսմէթէ ժէնէրալ	Անգլ. Լբ.	4	30
Քրէտի ժէնէրալ	Օսմ. »	9	16
Պանք տը Գոնս	» »	7	30
Սօս. Շանժ է վէրէօր	» »	4	30
Թրամուէյ	» »	485	
Ռուսէրի երկաթուղի	Ֆր.	66	25
Օղլիկասիոն տը Բրիօրիթէ	»	—	—
Բաժնեթուղթ Լավրիսմի	»	10	

ԵՒՐՈՊԱԿԱՆ ՊՈՐՍԱ

Լոնտոն, 28 Մայիս ժամ 5 վայր. 15 երեկոյ

Անգլ. քոնսոլիտէ		99	3/16
Օսմ. »	Սերի Դ. բացուելեալ	16	¾
» »	» գոցուելեալ	16	9/16
» »	» Ա.	29	
» »	» Բ.	17	
» »	» Գ.	16	½
Օթոման 1871		94	½
Փոխառութիւն 1877		101	¼
Պանք Օթոման		11	¾
Ռուսական փոխառ. 1873		103	½
Եգիպտական միացեալ (Ունիֆիկէ)		94	¾
» առանձ. (բրիվիլէժիէ)		103	3/8
Տպրամ Սոնիէ		85	3/8
Տօսմանիայ (փոխառ. Բոչիլա)		105	
Փոխանակութիւն Բարիզի վրայ		25	374

Վիեննա, 28 Մայիս, ժամ 4 երեկոյ

Փոխանակութիւն Լոնտոնի վրայ	118 60
Օսմանեան երկաթուղի	36 10
» Լեժիի բաժնեթուղթք	115

Բարիզ, 28 Մայիս ժամ 3 վայր. 45 երեկոյ

Ֆրանսական Ռանթ 4½ %	105 75
» » 3 %	86 87½
Օսմանեան քոնսոլիտէ Սերի Դ. բացուելեալ	16 85
» » » գոցուելեալ	16 75
» » » Բ.	17 10
» » » Գ.	16 75
Օսմանեան երկաթուղի	66 87½
» Լեժիի բաժնեթուղթք	— —
Պանք Օթոման	549 37½
Գրէտի Լիոնէ	632 50
» Ֆոնսիէ	1331 25
Գանգուեան տ'Էյգպտիզ	92 50
Սուէզի ջրանցք	2350
Ռուսական 5 % 1877 թ.	— —
Իտալական Ռանթ	97 25
Սպանիական (արտաքին)	76
Եգիպտական միացեալ	463 75
Բրիօրիթէ թիւրք	460
Հելլենական 5 %	480
Զէք Լոնտրայի վրայ	25 18

ԴՊՐԱՑ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ԼԱՆԿԱՅԻ

Լանկայի Դպրոցասէր ընկերութեան նորոգ գործագիր ժողովն՝ ՕԹ. Մանասխանի մը հետ միացած՝ նախաձեռնութեամբ Ռուբէն էֆ. Պիպէռճեանի, այս տարի եւս Ս. Զատկի առթիւ թաղիս երկսեռ վարժարանաց 44 ազքատիկ ուսանողաց՝ հանգանակութեամբ ազնիւ թաղեցւոց եւ բարեսէր ազգայնոց՝ մէկ մէկ ձեռք հագուստ պատրաստած և իրենց հաշուն խորհրդոյսներ կայացուցած ըլլալով, կը փութայ խորհուրդս իւր զգացած գոհունակութիւնն և շնորհակալիքը հրապարակաւ յայտնել, և հանգանակեալ նպաստից եւ ծախուց հաշուն տալ ի հրատարակութիւն։ Ի դիմաց Թաղ. Խորհրդոյ

Ա.ԹԻՆԱՊԵՏ Ա.ԹԻՆԱՊԵ

Ռուբէն Պիպէռճեան, Գէորգ Սարաֆեան, Գարուստ Գազանճեան, Աւետիս Լիւլէճեան, Մանուէլ Պէշիրեան, Յարութիւն Փորթուգալեան, Գրիգոր Թորոսեան, Բեթարակ Կիւլլապեան, Ստեփան Թագաւորեան, Տիգրան Ալլահվերտեան 20 ական· Գրիգոր Սարաֆեան, Գառնիկ Վանլեան, Դաւեանոս Համբարձումեան, Համբարձում Քէրէչատէճեան, Գէորգ Պետրոսեան, Ալիքսան Գազանճեան, Յովհաննէս Պասմաճեան, Գէորգ Ճիզմէճեան, Պօղոս Էքսէրճեան, Գրիգոր Շահտանեան, Պետրոս Նիկողոսեան, Յակոբ Էքսէրճեան, Գէորգ Ալանեան, Ստեփան Յովակիմեան, Օննիկ Թուլունպաճեան, Միհրան Օտապաշեան, Մկրտիչ Մաղաքեան, Աբիկ Թէրզեան, Յարութիւն Քէրէստէճեան, Գարէգին Մովսէսեան, Յակոբ Մայլըմեան, Գէորգ Մէչտուճեան, Ռուբէն Լօգմակէօզեան, Գրիգոր Մկրտիչեան 10ական· Զկնավաճառաց արհեստապետ Մ· Մկրտիչ աղա Մանուկեանի ձեռամբ հաւաքուած, 300· Ռուբէն էֆ· Պիպէռճեանի ձեռամբ Թաղէն և զանազաններէ 290· Յակոբ էֆ· Կիւմիւշեանի ձեռամբ 272· Միհրան էֆ· Մանուկեանի ձեռամբ 130· Կարապետ էֆ· Արաէնեանի ձեռամբ 140· զբօսարանապետ ի Բերա Մկրտիչ էֆ· Պօյաճեանի ձեռամբ 110· Յարութիւն էֆ· Կրօնեանի ձեռամբ 100· Գառնիկ էֆ· Տիգրանեանի ձեռամբ 55· Մաքսուտ էֆ· Գազանճեանի ձեռամբ 22· Եկեղեցւոյ պնակի հասոյթէ 222· ո·բոց ընդհանուր գումարն է 3107 ղրշ·

ՄՈՒՏՔ

	3107
Մնացորդ տոմս	1615
	4722

ԵԼՔ

31 ձեռք տղայոց հագուստի շինութեան	1675
13 ձեռք աղջկանց հագուստի շինութեան	300
44 զոյգ կօշիկ և 31 գոտակ	838
Վարժարանաց 6 հատ մեծադիր աշխարհացոյց քարտէզներ	133
Տոմսակաց և նամակաց, տպագրութիւն և լրագրի ազդարարութիւն	88
	3034
Մնացորդ տոմս	1615
	4649
Պատրաստ դրամ	73
	4722

ՆԱՄԱԿ ԵԳԻՊՏՈՍԷ

ԱՂԵՔՍԱՆԴՐԻԱ, 3/15 մայիս

Ն· Բ· Նուպար փաշա, վերջերս Մանթոնէ (Գաղղիա) հոս համնելով անձնական ինչ ինչ գործերու կարգադրութեամբ զբաղեցաւ երեք շաբաթի չափ և ամսոյս 5ին ուղեւորեցաւ դէպ ի Փարիզ Նափոլիի ճանապարհով ուր պիտի այցելէ իւր երկու թոռները՝ Վսեմ· Տիգրան փաշայի որդիքը, որք այժմ իրենց հօրեղբօր մօտ կը դաստնուին ի Վիլլա Ֆրան·

Նուպար փաշա իւր դստեր, ողբացեալ Տիկին Տիգրան փաշայի մահուամբ ըրած անդարմանելի կորուստէն չափազանց համակեալ է· Իւր ծերութեան մէջ ունեցած այս ցաւն անհետացուցած է իւր ֆիզիքական նախկին կորովը·

Թէ՛ եւրոպացի և թէ տեղական բարձրագոյն չրջանների պատկանող բազմաթիւ անձնաւորութիւններ Նոյին Բարձրութեան մեր մէջ անցուցած քիչ օրերուն մէջ փութացին իրենց համակրանաց և ակնածանաց հաւատիքը ներկայացնել այդ անմոռանալի հօր· Այս ժողովրդական ցոյցը կ'ապացուցանէ թէ հայ նշանաւոր դիւանագէտը խիստ սիրելի է բոլոր Եգիպտոսի բնակչաց և որչափ ինքը հեռի գրասենեակի եղերքէն, դարձեալ ժողովրդական առ ինքն ունեցած վստահութիւնն և համակրութիւնը կենդանի են միշտ հոն·

Քաղքիս Փաշ դ'Ալէքսանդրէ լրագրոյն հետեւեալ տողերը նոյնը կը հաստատեն· «Նուպար փաշայի վերադարձը «մեծ ուրախութիւն պատճառեց տե«ղացւոց· Ներսերէն մեզ հասած թղ«թակցութիւններէ կ'իմանանք որ ընդ«հանրապէս ֆէլլահները կը մաղթեն «նորէն տեսնել զնուպար փաշա կա«ռավարական գործերու գլուխը·»

—Ի՞նչ եղաւ Նեղոս եթէ այդ անուն դեսը այս տարի շատ կանոնաւոր վիճակ մը ունեցաւ, ընդհակառակն լրագիրը Նէղոսի ջրերը ժամանակէն առաջ պղտորեցան· Այդ լրագրոյ երբեակ խմբագիրներն ալ մեկնած են Աղեքսանդրիայէն· մին՝ քահանայ՝ որ ակամայ բացակայ է Եգիպտոսէն, Միւսն է ի Պոլիս, իսկ երրորդն ի Դահիրէ, ուր ամիս մը ևս կենալու պէտքին մէջ կը գտնուի ակամայ·

—Տիկին Սիրանոյշ (Մատամ Շարլ Նիքօսիաս) անուանի Հայ դերասանուհին անցեալ չորեքշաբթի քաղաքէս մեկնեցաւ Պոլիս վերադառնալու համար·

Քաղաքիդ թատերասէր երիտասարդութիւնն անուշադիր պիտի ուզէ օգտիլ Հայ թատերաբեմին այդ փայլուն աստղին ներկայութենէն·

Համակրելի դերասանուհին իրեն հետ կը տանի եգիպտարնակ ազգայնոց բարեմաղթութիւններն իրեն ապագայ ձեռնարկութեանց համար·

ՌՈՒԱՄԷՍ

ԳՐԻԳՈՐԵԱՆ

ԵՆԱ, 13 մայիս

Երբ ազգային և հասարակական զանազան հարցերը լուութեան և անհոգութեան ենթարկուին, տանում են որ և իցէ ուղղութիւն և մընում կարծես պատմականապէս հասատուած· Ինկամի ունենալով լուութեան այսպիսի շատ անգամ չար հետեւանքները, աւելորդ չէ և մանաւանդ շատ կարեւոր է և անհրաժեշտ Աբեռնէլի թ· 1590ի մէջ յիշած կարեւոր ուղղութեան մասին երկու խօսք ասել, զոր յոյս ունիմ հոգատար ընթերցողները ուշադրութեան կ'առնեն· Հարցը Գրէթերեան Նորամուծ բառի մասին է, որով կնքում են օտարազգիները մեր ազգային եկեղեցին· Եթէ փոքր ինչ ուշադրութիւն դարձնենք մեր պատմութեան վերայ, մենք կը տեսնենք որ այդ անունը մի քանի անհոգ անձանց թոյլ գործառնութեան տխուր հետեւանքներից մէկն է՝ որ իբր թէ պաշտօնական կերպարանք է ստացել· Զարմանալի է այն, որ այդ բառի գործածողները չեն մոռանում Նորա նշանակութեան և ճշդութեան մասին, բաւական է որ մի անգամ մէկը հասկանալով թէ անհասկանալով կնքել է ինքն զինքեան այդ անուամբ և ահա ամբողջ հայ աշխարհը ոչինչ հակասութիւն չէ դտնում Նորա և իւր ինչութեան մէջ· Ճշմարիտ է, այս հարցը նոր չէ բարձրանում· Նոյն իսկ երջանկայիշատակ Այվազեան եպիսկոպոսը նկատողութեան առաւ իւր Խանդարմանդ Հայաբնակութիւն գրքի մէջ, բացատրելով այս կիրառութեան հիմունքին սխալ լինելը· սակայն այդ անօգուտ անցաւ, ինչպէս և շատ ուրիշ հարցեր, որոնք անձնական նեղ հաշիւներում խեղդւում էին· Որչափ յիշում եմ, Այվազեանը ասում էր որ Գրէթերեան անունը չէ կարող մեր եկեղեցու յատուկ արտայայտութիւնը լինել, զի Ս· Գրիգոր Նոյնչափ յարգուած է միւս քրիստոնէական եկեղեցիներում, որչափ և մերում, ըստ որում նա ընդունուած է յունական և կաթոլիկական եկեղեցիներում, որպէս առաքելահաւասար անձն, ապա և միւս այդ եկեղեցիներն եւս կարելի է Գրիգորեան անուանել· Սակայն այս դեռ բառական նշանակութիւնն է, որ հանգուցեալը յառաջ էր բերում իւր փոքրիկ գրքոյկի մէջ· Առնենք միւս կողմերը· Մի թռուցիկ հայեացք ձգենք ամբողջ եկեղեցական պատմութեան վերայ· ո՞ր եկեղեցին է օտարի քմահաճութեան տրամադրութեան ազդեցութեան տակ իւր անունը ստանում· եթէ այդպէս լինէր Հայոց եկեղեցին, որպէս ամենահինը քրիստոնէական աշխարհում, պէտք է կատարեալ իրաւացի կերպով բոլոր նոր քրիստոնեայ համայնքներին «մկրտէր», և իւր կամեցած անուամբ դրոշմէր (**), մինչդեռ առանց որ և իցէ հիմքի, նոր երեւան եկողներն են սկսել դաւրուց ի վեր դոյութիւն և հաստատութիւն ունեցող եկեղեցուն հանոր անուն ստեղծելու· ուրեմն Հայոց եկեղեցու իրաւունքը պէտք է բռնաբարուած համարուի՞··· Այսու ամենայնիւ ճշմարտութիւնը մի այլ կէտում է, իւրաքանչիւր եկեղեցի օտարի լեզուով անուանում է այնպէս, ինչպէս նոյն այդ եկեղեցու համայնքն անուանում է ինքեան· Օրինակի համար հռովմէական եկեղեցին մենք կոչում ենք կամ տեղւոյն անուամբ կամ կաթոլիկ անուամբ· «Կաթոլիկ» ասելով հասկանում ենք այն եկեղեցին, որը զինքը «կաթոլիկ» է կոչում· իսկ այդպէս կոչելով մենք չենք մերժում մեր եկեղեցու ընդհանրականութիւնը, կամ թէ այդ չենք համարում սեփականութիւն հռովմական եկեղեցու· Նոյնը կարելի է ասել օրթոդոքս, Պրոթեսթանտ, «բողոքական-աւետարանական» և այլն անունների մասին· Պարզ է ուրեմն, ինչպէս որ մենք յոյներին իւրեանց բառով «օրթոդոքս» անուանելու ենք սովոր, նոյնպէս էլ ռուսներին պարտաւոր ենք «պրոթեսթանտ», հռովմէականներին «կաթոլիկ», գերմանական վերանորոգուածներներին, «Պրոտեստանտ-Եւանգելիստ» անուանել (*)· Ըստ այսմ և մենք պէտք կոչունք ճիշդ այնպէս, ինչպէս կոչուել ենք մեր եկեղեցու գոյութեան ամբողջ 18 դարերի ընթացքում, առ այն հաստատութիւն ունենալով մեր մատենագիրներն և զանազան անկեղծ թղթերը· Հեռանալով յիշողութեանս և առձեռն ունեցածս 15ի չափ մատենագրութիւնների վերայ կարող եմ հաւաստիաբար ասել որ «Գրիգորեան» բառը մինչև ներկայ դարուս կէսերը լսուած չէ եղել· այլ այդ մոռել է առաջին անգամ Ս· Էջմիածնում Սինոդի հաստատելուց զինի և զարմանալին այն է որ մինչդեռ պաշտօնական թղթերում հայերէն գրում է «Լուսաւորչական», ռուսերէնում է «Արմէնա-Գրիգորիանի» եւ ոչ «Պրոսուիտորեանսքի» և թարգմանութեան այդ անպատեհութիւնն ոչ օրի աչքին չէ զարնում· Նկատելի է և այս որ ռուսերէն թարգմանողն իսկոյն նկատել է «Գրիգորեան», բառի յատուկ չլինելն, ուստի և մի պոչ էլ կպցրել է՝ «Արմէնա»·

(*) Հայ հաւատափոխներն անուանում են իրանց «աւետարանական»· ասացէք խնդրեմ, ո՞ր եկեղեցին է որ աւետարանական չէ·

Ապա և հայ պաշտօնականները կարծելով թէ այդ սուրբ անուան մերժումն սրբապղծութիւն կը լինի, ընդունեցին չնկատելով պատմական հակասութիւնը և կնդութիւնը· Այսպէս այս բառի կիրառութիւնը սկսուեց և շարունակ մնաց մինչեւ անցեալ տարին, երբ Սրբազան Օրմանեանի սրատես աչքերից չխոտորուեց այդ ծիծաղելի սխալը· Ամենուհետև սկսուեց գործածուիլ ուղղափառ, առաքելական և ըստ տեղւոյն Հայաստանեայց բառերը, բայց դժբաղդաբար ոչ, պաշտօնապէս· իսկ լրագրութիւնը բառերի գործածութեան մէջ անկշիռ չլինելով, անտարբեր մնաց կամ թէ կրօնի անխնայ ընթացքին մարար քրդի տակ պատմական ճշդութիւնից էլ վերծ մնաց·

Այս ամէնից յետոյ փափաքելի է որ նոյն իսկ բոլոր պարագաները անտես առնելով, գտնէ պատմական ճշդութիւնը սրբութեամբ պահպանուի· Մի եկեղեցի պէտք է այն անունը կրէ ինչ անուամբ որ նա դարերու ընթացքում իւր հաստատուն գոյութիւնը իւր ծնուած տեղում ունեցել է· Հայոց եկեղեցին հայ ազգի հոգի և մարմին դարձած, հինաւուրց, կատարեալ սեփականութիւն է, ուստի պէտք է և իրաւացի ու պատմականապէս ճիշդ է, Հայաստանեայց, Հայոց ուղղափառ և առաքելական կոչումը·

ԱՐՇԱԿ ՏԻՐ ՄԻՔԷԼԵԱՆ

Ո-ռանդ ապառաջիանոցի

ՋԱԿԱՏԱԳԻՐ ՄԸ

ԱՌ ՍԻՐԵՑԵԱԼ ՁԱՐՈՒՀԻՍ Ֆ...

Քանիո՞ն երջանիկ էր Ատրինէ տարիներ առաջ· իր ծնողաց գգուանաց քնքոյշ ծաղիկն էր, մատաղ և սիրուն աղջիկ, ճոխ փառաց մէջ կը սնանէր· հայրը կը գուրգուրար անոր վրայ, որոյ համար այդ կուսանն էր ամենայն ինչ· Այն տանը մէջ ամեն տեսակ զուհողութիւն կ'ընէին, իր մէկ խօսքն երկու չէր ըլլար, ոչ ոք կը հանդուգներ որ անոր վարդագեղ այտերուն վրայ արցունք երեւի և ճակտին վրայ՝ տխրութիւն·

Այդ աղջիկն իր թաղի դպրոցին մէջ նախակրթական դաստիարակութիւն առած էր, եւ բարձրագոյն կրթութեան պէտք ունէր· 13 տարեկան եղած էր արդէն, ուստի գիշերօթեայ վարժարան մը դրին զինքը· Ընտիր ընտիր հանգամանքներով օժտեալ էր· կ'երեւէր թէ, այդ նորատի աղջկան քով, մեծ ոգի մը կը պահուէր· Իրեն աւանդուած դասերը դիւրութեամբ կ'ըմբռնէր· առաջին տարին յաջող անցուց, երկրորդ չրջանին մէջ իր շնորհքներէն ոմանք սկսան տակաւ երեւան գալ· արտասանութեան դասերը չափազանց կ'սիրոյժէր, բանաստեղծական տողերէ կը յափշտակուէր և յանդգնաց կը ցուցնէր թէ բնութիւնն իր խորին մէջ այդ ոգիէն մաս մը դրած էր· Այդ սըրբազան հուրն ատիճանաբար կ'սկսէր բռնկիլ և Ատրինէ փափուկ զգացումներով օժտեալ՝ մեղամաղձոտ աղջիկ մը եղաւ, տխուր գրութեանց մէջ իր մեծ հաճոյքը կը գտնէր, և կարելի էր ըսել թէ դառնութեանց աղջիկն էր նա· Շարադրութեանց սկսած էր, և ամեն զուարթ նիւթերու մէջ ալ, տխուր կողմ մը զետեղելու պատշաճութիւնը կ'ստեղծէր· Բանաստեղծական ոգւոյն հետ, ունէր նաեւ գեղութեան հուրն, վարժարանին աղքատիկ տղայոց միայն թուղթ կուտար, միւսին գրիչ և ուրիշի մը իր տետրակները փոխ կը մատուցանէր· մինչեւ իր դպրոցին վերջին օրն այս զգացմունք ո՞րչափ զարգացած էին ի նմա·

Իր վերջին չրջանին մրցանակաբաշխութեան օրն էր· հայրն ու մայրը ներկայ էին հանդիսին· Ատրինէ իր հրաժեշտի ողջոյնը կարդաց և որոտագին ծափեր, վարդի թերթերու պէս, իր վրայ տեղացին· Գրքերով և պսակներով զարդարուած սեղանի մը առջեւ բերուեցաւ, տնօրինուհին անոր գլուխը ծաղկեայ պսակ մը բոլորեց· Ի՞նչ սիրուն էր Ատրինէ սպիտակ հագուստ· դեղձանիկ մազերը, ուսերէն վար կ'իջնէին· երկնագեղ աչկունք, շողշողուն աստղերու նման, իր ճակտին ստորոտը կը վառէին, յոգնած արտեւանունքն անտարբեր կ'երերային· իր տրժգոյն և շնորհալից դէմքը կը ցուցնէր թէ աշխատութեան երկարատեւ պատերազմ մը խոնջ և յաղթական կը դառնար· Սպիտակ դաստակներու վրայ, ապարանջաններ կը շողային· հեղլեն գիւղուհի մըն էր, այո՛, իր արտաքինն ալ բանաստեղծութիւն էր· Ազգականք և բարեկամք ծաղկեայ փունջեր նուիրեցին· Ատրինէի կենաց ամենէն ուրախ և ամենէն տրտում օրն էր, զի այնչափ ընկերուհիներէ կը բաժնուէր, զորս իբրեւ քոյր սիրած էր, հրաժեշտ կուտար դպրոցին՝ ուր նա մըտած էր անգէտ, տգէտ և ընդ որ դուրս կ'ելնէր զարգացեալ մտօք և զարդարուած առաքինութեամբ·

Տունը պիտի ըլլար այսուհետեւ իր դպրոցը, զի կարդալ և գրել իր մտքութիւնը կամ բարոյական հիւանդութիւնն եղած էր· իր սիրելագոյն բարեկամքն էին գիրք և գրիչ· Շատ անգամ երեկութիներու կը գտնուէր, սակայն կարծես հաճոյքը մեռած էր այն սրտին մէջ, ուստի զրօսանաց մէջ կը կարծէր թէ իր ժամերը կը կորսնցնէ· դաշնակն՝ որ բանաստեղծութեան հրապոյրն է, այլոց ձեռքին տակ ոչինչ կ'ազդէր ի նա· միայն իր սենեկին մէջ կը զարնէր, հոն էր իր քերթութեան ոգին, այն սրբարանին մէջ կ'օթեւանէր· Իր հոգին մեղամաղձոտ կտորներուս վրայ կը թրթռար· Շաբթին կը թրթռացնէր իր մատանց ներքեւ, կը նուագէր Պախի, Շեֆռնի, Մենդելսօնի, Ռըպէ-Ռընդ-ի մրրկայոյզ կտորներն, կը դաշնակէր անոնք, որք խորհրդաւոր էին, անհուն էին·

Ատրինէ օրերէ հետէ տխուր էր· ինքն ալ չէր գիտեր իր թախծութեան պատճառը· գիշերներն իր մայրը կ'երգէր· վշտեր կը պատրաստուէին·

— —

Առաւօտ մը Ատրինէ բոլորովին զարհուրած երազներէ, երբ յանկարծ· ան կողնոյն մէջ գտաւ իր մայրը· հիւանդ էր նա Իսկոյն բժիշկ կոչել տուաւ, խնամով կը հսկէր դեղերուն· բայց ա՜խտոս, Իսկուհի տիկնոջ հիւանդութիւնն օր ըստ օրէ կը ծանրանար· Ալ ամեն բան մոռցաւ Ատրինէ· բանաստեղծութիւն, դաշնակ, գիրք և գրիչ· ինքն եղաւ այսուհետեւ այդ տանը մէջ մայր և աղջիկ, նորա մը տածմունքն ալ մի միայն իր մայրն էր, անքուն կը հսկէր անոր անարիպ վերեւ· հմաբաւեալ բժիշկներ կոչուեցան յաջորդաբար· բայց ե՜ղուկ, մահն իր վճիռը տուած էր· օր ըստ օրէ կը հալէր, կը մաշէր եղկելի տիկինն· Ատրինէ մօրը մնարից մօտ շատ անգամ ուրախ դէմք կը կեղծէր, որպէս թէ բնաւ վիշտ և ցաւ չէր զգացած՝ իր մօրը ցաւերը վայրկեան մը ամոքելու· Մի թէ այդ փափկիկ սիրտը չէ՞ր ճմլուեր վշտերուն բեռան տակ· մայրն ի զուր կ'ստիպէր իր աղջիկը քանի մը վայրկեան պարտէզ երթալ· — Մայր ըլլալ և չցաւիլ որդւոյն, կարելի՞ բան էր·— բայց Ատրինէ և ոչ իսկ վայրկեան մը կարող էր հեռանալ հիւանդին սենեկէն· Միայն օր մը, ալ չդիմագրելու համար, յանձն առաւ երթալ· Մտաւ բուրաստան, ամենայն ինչ ոչինչ կ'երեւէր, իբրեւ թէ անապատի մէջ ըլլար, գեղեցիկ աւազուտ և երկինքն ամպոտ· նոր փթթած փափկիկ և հոտաւէտ ծաղկունք վայրի փուշեր կը թուէին իրեն· բայց գտաւ բան մը· ազատ արտասուելու պատեհագոյն ժամ· և մխիթարուեցաւ ազատ արցունքի ու կրակոտ հեծկլտանքներու մէջ· Իսկուհի տիկնոջ հիւանդութեան մէկ տարին այսպէս լրացաւ· Ատրինէ և ոչ իսկ օր մը ուրախ սրտով լսեսնին նայեցաւ· մոռցած էր այդ բանաստեղծութեան թագուհին, որուն այնչափ անգամ նայած էր պատուհանին առջեւ կանգնած·

Նոր ազէտ մըն ալ կը պատրաստուէր այդ գժբաղդ տանը, հայրն ինքզինքն արբեցութեան տուած էր· ամեն երեկոյ գինով տուն կուգար, և հազիւ սթափած չ'սթափած շգիներէն, առաւօտուն կանուխ կը մեկնէր· չեմ գիտեր թէ վշտին դառնութենէ՞ն էր արդեօք· գինետուներն իր բնակութիւնը հաստատած էր· և այսպէս շատ ժամանակ չանցած՝ գինին և օղին ոչնչացուցին այդ մարդուն մէջ, ինչ որ մարդկային էր, գութ, սան սէր, ծնողական գորով ևն· տանը մէջ գազանութիւն ձեռք առած էր իր օրհասական կնոջ և յուսահատ աղջկան դէմ, բժիշկներու դալուստը բոլորովին արգիլեց· Ի՞նչ կ'զգար արդեօք Ատրինէ· Իր մօրմէն կը ծածկէր հորը կոշտ և կոպիտ ընթացքը· իր ունեցած ադամանդները գաղտ· վաճառելով բժիշկներ կը կոչէր մօրը օգնութեան, առանց երբէք հօրն իմացնելու· ամէն օր բժիշկ կ'այցելէր· բայց ալ ամեն միջոց սպառեցաւ· միայն երկու ապարանջան մնացած էր զորս Ատրինէ չրջանաւարտ հանդիսացած օրը դաստակներուն վրայ կը կրէր· Ի՞նչ յիշատակներ կը զարթուցանէին ի նմա այդ ապարանջաններն· իր սիրելի զարդերն էին· բայց պաշտելի մօր մը ցաւերը մեղմացնելու համար հարկ էր զանոնք ալ նետել ոսկերչի մը գրպանն, և նետեց առանց արցունքի·

Առաւօտ մը արթնցաւ տիկին Իսկուհի սովորականէն աւելի ժգոյն, մահուան անօսր տուեր մը կ'երեւէր անոր դիմաց վրայ, Ատրինէ քովը փութաց, Իսկուհի տիկնոջ օրհասի վայրկեանն էր, հազիւ մի անգամ «աղջիկս» ըսաւ և ահա ոչ էլ էր···

Սգոյ և արցունքի ժամ· հանգչած էր նա խսպառ, և ալ ցաւ չունէր· Բժիշկը դեղագործին հետ ներս կը մտնէր· ալ պէտք չունէին··· Իսկուհին տարին անկով, չարականներով և արցունքներով·

— —

Գիշեր մը Ատրինէ պատուհանին առջև նստած էր· օդ, երկինք և ծով ջինջ ու մաքուր էին, լուսնին իբրեւ գիշերահեմ հիւրի ամայութեանց մէջ կը ճեմէր, աստղունք իբրեւ ադամանդեայ կայծակներ, կը փայլէին անոր քովեր ցեր ու ցան· Նա որ երբեմն, գիշերային մթութեան մէջ պատուհանի առջեւ նստած ատեն, բանաստեղծութիւն կը թափէր թղթերու վրայ, հէ՛ք աղջիկ, ոչինչ կ'զգար այն վըսեմ տեսարանին առջեւ· պարտիզին ծառերը գիշերաշրջիկ հովիներ էին, որք զնա կը խռովէին· լռութիւն և անսահման տխրութիւն կը տիրէին այդ աղջկան վրայ· առանձին էր տան մէջ, հայրը գինետուներէ չէր կարող բաժնուիլ, իր կնոջ մահուամբը բեռէ մը ազատած էր· երեք ամիս տխրագին անցուց Ատրինէ·

Երեկոյ մը դուռը բաղխուեցաւ, հայրը եկած էր, ուրախութիւն չ'զգաց նա երբէք· նոյն գիշերը շատ բարի էր աղջիկանը նկատմամբ· նախկին սէրն ու գորովը կը կեղծէր· իր չրթունքին ներքեւ բան մը կը ծածկէր և կարծես չէր համարձակեր իր աղջկան յայտնել վերջապէս երկար մտածմունքներէ յետոյ ըսաւ· «Սիրելի աղջիկս, յորմէ հետէ մայրդ մեռած է, միշտ գլխիկոր և տխուր կը տեսնեմ զքեզ և ես որ չեմ ուզեր արտասուքներդ տեսնել, կը փափաքիմ որ մայր մը ունենաս, ընկեր քեզի տանդ մէջ· ես իբրեւ գթոտ հայր, չեմ ուզեր որ յաւիտեան որբ տեսնեմ զքեզ ի մօրէ·» Ատրինէ երբէք հաւանութիւն չի պիտի կարենար տալ, բայց ընդդիմութիւն ընել իր հօրը, այդ անկարելի էր· զարմանալի էր Ատրինէի որ հայրն այնչափ բարեփոխուած էր, Նոյն գիշերը երկա՞ր մտածեց Ատրինէ· Սոսկի և նախանձի միապէս կ'զգար· դեռ երեք ամիս անցած էր իր մօր գերեզմանին վրայ և տակաւին ամեն տխուր յիշատակ անջինջ կը մնային իր սրտին մէջ· իրենց տանը մէջ ողբերու արձագանգները, հանգուտեան շարականները եւ թաղման խնկոց բուրմունք, մարած և ընկուած չէին· ի՜նչ օգուտ, պէտք էր հնազանդիլ·

Վերջապէս հասաւ հարսանեաց օրը··· իր մօր մահուան չափ տխուր էր Ատրինէ· Գիշերուան ժամը 2 ին յանկարծ նորեկ մայրը, սպիտակ շղարշներու և ոսկեղէն թելերու մէջ՝ դրան սեմին վրայ երեւաց իր ամուսնոյն, մէկ քահանայի և հարսնեւորաց հետ· Արուսեակ, այդ մորուն, յարգանօք բարեւեց զնա, փոխադարձ յարգանքներ ընդունելով· Գրեթէ կէս ժամ խօսակցութեամբ անցաւ, ապա քահանայ իր պսակի արարողութիւնը կատարեց և մեկնեցաւ· այս եղաւ անոնց հարսանիքը·

Ի սկզբան տիկին Արուսեակ, գթոտ մօր մը պէս կը սիրէր զԱտրինէ, ամեն օր միասին պտոյտներ կ'ընէին, ինքզինքը բարեբաղդ կը համարէր, որ այնպիսի աղջկան մը պատրաստի մայրն եղած էր· բայց այդ ամէնը հագիւ ամիս մը տեւեց· այդ պատրաստի մայրն սկսաւ կամաց կամաց մօրու դառնալ, աչքերը կը խոժոռէին Ատրինէի վրայ, կորսնցուց այն փափկիկ զգացումները, զորս ամօրեայ մի ժամանակ կեղծած էր այնքան ճարտարութեամբ· ամեն բանի մէջ թերութիւններ կը գտնէր և միշտ երկրորդ առանց հօրը իմացնելու չէր կարող հանգըստանալ· Սկսաւ յոխորտալ Ատրինէի դէմ· արգիլեց հիւրերու սենեակը մտնել· ահա այդ կեանքին դատապարտուած էր մայրակորոյս աղջիկն· ո՞րու յայտնել իր վիշտն, ո՞րու թափել իր արցունքը, միայն հայր մը ունէր աշխարհիս վրայ, նա ալ մտարդի ստեղծուածի մը փոխուած էր· Ատրինէ դաստիարակուած էր, փափուկ սիրտ և փափուկ հոգի ունեցած էր, բանաստեղծութեամբ խմորուած էր, մի միայն թշուառութիւնն զգալու· իրա՛ւ, ալ սպառած էր նա, տկարութիւն մը կերեւէր անոր վրայ, օր ըստ օրէ կ'աւելնար, փոքրիկ հազ մըն ալ կ'աճէր անոր հետ· օր մը յանդգնեցաւ իր հօրն ազաչել որ զինքը բժշկի մը տանի·— բան մը չունիս, ըսաւ հայրը, հարբուխ է թերևս· Ամիսներ անցան անհոգութեամբ, բայց Ատրինէի փոքրիկ հարբուխը հիւծախանի փոխուեցաւ· Ատրինէ՝ այս չարչարանաց տարին եղբայր մը ունեցած էր· քիչ ան գամ կարողութիւն և սիրտ կ'ունենար տեսնելու, այն ալ հեռուէն· օր մը միայն Արուսեակ Ատրինէի քով եկած էր, այն ալ իմացնելու համար թէ պէտք էր զսպել իր հազը, որովհետեւ մանուկը կը ննջէր· իր միակ բաղձանքն էր ստէպ և միանգամայն մօտէն տեսնել փոքրիկ տղան, չարերու մէջ այդ անմեղութեան պատկերն, սատանի գիրկ այդ հրեշտակն· Ատրինէ ալ կը կարծէր թէ իր հազը հարբուխէ յառաջ եկած պարզ բան մըն էր· Օր մը Արուսեակի պտոյտի ելած միջոցին, աղաչեց կաթնտուին որ Լեւոնը իր քով բերէ· գթաց խեղճ կինը անոր վրայ և խոյսն բերաւ զնա· Երկա՞ր համբուրեց, սիրեց Ատրինէ զլեւոն, խել մը սիրալիր նախադասութիւններ սպառեց տակար կուրծքովը, և մինչ իր քով դրած երանի կուսաբ այդ մատաղ կենաց, Արուսեակ սենեկին դրանը վրայ երեւցաւ· Ի՞նչ պիտի ընէր արդեօք, ի՞նչպէս ազատիլ այդ ճիւղէն· Քանի մը քայլ յառաջ եկաւ նա և խոժոռ հայեացքով մը արձակելով ի նա ըսաւ· «Ի՞նչ է այս, կ'ուզես որ Լեւոնս ալ թոքախտով գերեզման՞ տանիս քեզի հետ»· Թոքա՛խտ··· սոսկաց, արհաւիրք զգաց, սարսուռը պատեց զինքը· «Թոքախտ··· ըսաւ ինքնին, թոքախտ ունիմ ես· ո՜հ, մայրիկս, ի՞նչու տարաժամ ձգեցիր զիս, թողուցիր այս մորուին ճանկը, այս անիծեալ աշխարհին վրայ, և··· որպէս զի թոքախտ ըլլամ· Ո՜հ, եկո՛ւ գգուէ զիս ցուրտ դաստակներովդ, հանգստացուր զիս սև հողին մէջ· այս տունն ինձ համար դժոխք է միայն· Ի՞նչու հայրս ըլլար անգութ ինձ նկատմամբ, ի՞նչու զիս այս սենեկին մէջ նետէր, ի՞նչու զիս չ'սփոփեր ցաւերուս վայրկենին· Ի՞նչ ըրի արդեօք·»

Այսպէս խօսեցաւ ինքնին Ատրինէ· Վշտերու բեռան տակ ընկճած էր· այն օրէն ի վեր, երեք շաբաթ գամեալ մնաց, ցաւագին ժամեր կ'անցուցնէր· Օր մը թոքախտ բառն երերաց իր շրթանց վրայ, և գիշեր մը ցնորից մէջ տեսաւ իր սիրելի մայրը, սպիտակ հագուած նոր հարսի պէս· Շաբաթ երեկոյ մը Արուսեակ հիւանդին սենեակը կը մտնէր, Ատրինէ առկայծ նայուածք մը արձակեց ի նա, ապա գլուխը մէկ կողմ դարձուց և կիսկըտուր «մայր իմ» արտասանելով մեռաւ·

— —

Իր բարձին տակէն գտնուած էր թղթի կտոր մը որուն վրայ գրած էր դողդոջ մատներով·

Տէր, զ···ակոց ցօրս··· ··· և խընդրած էր, որ այս նախադասութիւնն արձանագրուի իր գերեզմանին վրայ·

ՎԱՐՍԱՆՈՅՇ

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ

ՀԱՒԱՏՔ, ՅՈՅՍ, ՍԻՐ անուն թատերգութիւնը, կազմեալ, կը վաճառի Հայ գրավաճառաց և ըստրավաճառաց քով, գինն է 3 դահեկան·

503 1—3

ՍԻՍԱԿԻՐ ԱՊՏԱԼ եաթան տիւնեատ տերտիպ օյմանցի չարէսի· կը վաճառուի Հայ գրավաճառաց և ըստրավաճառաց քով· գին 2 դահեկան·

504 1—3

ՅԱՐԵՒԵԼԵԱՆ ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ԵՐԳԱՐԱՆ Ց· Ամարդոգեանի· Խուրք Հոգւոյս կը պարունակէ հայերէն աշխարհաբար լեզուաւ յօրինուած և խիստ գողտրիկ կերպիւ հիւսուած պլլ և պլլ գեղեցիկ երգեր տաճկերէն եղանակաց վրայ չափուած, ինչպէս են տիվան, գոշմա, շարքը, մնոի, կապել, գալէնտէր, սեմայի, սեսթան և այլն·

Մեծադիր 72 երեսներէ բաղկացեալ այդ գործն որ մինչեւ հիմայ 5 դրշ·ի կը ծախուէր, այժմ կը վաճառուի ի գին 2 դրշ·

493 2—8

Յ· Վ· ԱՃԷՄԵԱՆ

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՒ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ

Թուրքերէն, հայերէն, յունարէն, ֆրանսերէն, անգլիերէն, ռուսերէն, գերմաներէն եւ իտալերէն լեզուներով

Լեզուաց Դասատուութիւն

Դատական Գործեր, Ծանուցմունք

Թիւ 4, Զիվէր Պէյ Խան, Ղալաթիա, Թիւ 4

502 2—16

ԱՏԱՄՆԱԲՈՑԺ

ԱԼԻԲԵԱՆ ՍԱՀԱԿԵԱՆ

Կ· Պոլիս, Պահէֆ-Գաբու, Մաքսատան կից Թիւ 42

Պատրաստ է ամեն օր ժամը 3էն մինչեւ 10½ իրեն դիմողները ընդունել·

Երեքշաբթի և ուրբաթ օրերը կէս օրէն վերջ ձրի կը բուժէ աղքատները·

494 3—15

ԿՈՒՐԾԻ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՔ

Այս պահուս շատ կը խօսուի Ամերիկեան Դեղին վրայ, իբր դերազանց դարման Թոքախտի և կուրծքի ու շնչառական գործարանաց այն բոլոր հիւանդութեանց մէջ որք յառաջ կը բերեն Թոքախտ, պրոնշիդ, ուղեղային հազ և այլն·

Կ'երեւայ թէ չնորհիւ Ամերիկեան Դեղին, գործարանաց պաշտամունք արագապէս կը բարձրի, արեան չրջանը կը կանոնաւորի, շնչառութիւնն աւելի կը դիւրանայ, մաղասին առատ արտաթորման չնորհիւ· Դեղին կազդուրիչ ազդեցութիւնը կը փարատէ մելամաղձութիւնն· Ուստի և կը յարմարի ջղային հիւանդութեանց, կազմական տկարութեան, հիւծման և ապաքինման·

Կը

EMULSION SCOTT

(ՍԿՈՏԻ ՕՀԱԲԱԿ)

ՄՈՐԻՒ ՁԿԱՆ ՅՈՒՂ

ԻԼՖՈՖՊԷՊ ՊԸ ՀՕՎԼ Ի ՍՈՊՈՅՈՎ

Պատրաստեալ ձեռամբ ՍԿՈՏԻ և ՊՕՈՒՆԻ, ի Նիւ-Եորք։

Կաթին չափ ախորժահամ է

Մորիւ ձկան հում իւղի բոլոր յատկութիւններն զատ, իլֆոֆոսֆիդներու յատկութիւններն ալ ունի

Կը բուժէ թոքախտը
Կը բուժէ անարիւնութիւնը
Կը բուժէ խոյլերը
Կը բուժէ հաղը, ցրտառութիւնները
Կը բուժէ ընդհանուր տկարութիւնը
Կը բուժէ մանկանց ճոզածութիւնը

Բժիշկներէն ընդունուած է, ախորժահամ ու հոտունէ, դիւրամարս է, և ամենէն փափուկ ստամոքսները կը տանին զայն.

Կը վաճառուի գլխաւոր դեղավաճառաց և դեղագործաց քով։

Դործակատարք ի Կ. Պոլիս. ՀԱՄԱՆԻ ԵՒ ՀԻՐԶԻ. 443

ՅՕԴԱՅԱԻԸ ԵՒ ՄԻԶԱՆՑՔԻ ՔԱՐԸ

ՁԵՆ ԿՐՆԱՐ ԲՈՒԺԻԼ ԱՌԱՆՑ ԼԻԹԻՆԻ

Շ. ԸԼ ԲԷՐԻԷԼի հաստատուր Սէլ ՊԸ ԼԻԹԻՆները, փոքրաքանակ ստնուելով, քիչ ժամանակի մէջ կ'անհետացնեն միզանցքին մէջ գտնուող աւազը և քարը։ Այս երեւոյթով կը բացատրուի իրենց ազդեցութիւնն ընդդէմ վերու նշանակեալ հիւանդութեանց։ 445

ԼԸ ԲԷՌՏՐԻԷԼ և ԸՆԿ. LE PERDRIEL & Cie. Ի ԲՈՐԻՕ և Դեղարանաց մէջ։

ՆՈՒՊԻԱԿԱՆ ՆԻՒԹ

Խիստ յարմար է ներկելու համար կոշիկներն որք առաջին անգամն կը փայլին, առանց խոզանակելու պէտք ունենալու։ Այս փայլն, որ նշանաւոր պայծառութիւն մ'ունի, ամբողջ շաբաթ մը կը տեւէ։ Կոշիկներն անթափանցելի կ'ընէ ջուրի և խոնաւութեան։ Ցեղմը կամ ուրիշ աղտեղութիւնները դիւրաւ կը վերցուին թրջած լաթով մը, առանց փոխելու ներկին փայլը կամ գոյնը։

Այս ներկը կը յարմարի տարեց և կանանց ամեն տեսակ կոշիկներու։ Կարելի է գործածել զայն նորոգելու համար ճամբորդութեան կաշեայ ամանները։

Գործածման եղանակ. Ներկելի առարկային խնամով սրբել, այնպէս որ հին ներկէն հետք չմնայ։ Ապա փայլուն հեղուկին քսել, կամ սպունգի կտորով մը կամ վրձինով։ Թրջուած մակերեսին ներկին կը լորնայ։

Զգուշանալ կեղծերէն։

Ընդհանուր կեդրոնատեղին է ԷՍՄՈՒՆՏ ԳԱՐՈՒԱՆԱ, Անգլիական Ընդհանուր մթերանոց, Վ.ոյմոտա, Պահականոցին քով, կայարան Ղալաթիա-Շիւլիի Թրամուէյից, Թիւ 95 և 97, Ղալաթիա։ 78

1242

CAPSULES MATHEY-CAYLUS

Préparées par le DOCTEUR CLIN Prix Montyon

Les Capsules Mathey-Caylus à *Enveloppe mince de Gluten* ne fatiguent jamais l'estomac et sont recommandées par les Professeurs des Facultés de Médecine et les Médecins des Hôpitaux de Paris, Londres et New-York, pour la guérison des :

Ecoulements anciens ou récents, la **Gonorrhée**, la **Blennorrhagie**, la **Cystite du Col**, le **Catarrhe** et les **Maladies de la Vessie**, et des *organes génito-urinaires.*

Une instruction détaillée accompagne chaque Flacon.

Exiger les **Véritables Capsules Mathey-Caylus** de **CLIN & Cie**, de **PARIS**, *que l'on peut se procurer chez les Droguistes et Pharmaciens.*

Վ Ա Ճ Ա Ռ Ա Ս Ո Ւ Ո

ԳԱՌԼԸՄԱՆ ԵՒ ՊԼՈՒՄՊԻԷԿԻ

Ղալաթիա Պէօյուք Մելլէթ խան, միջազգային թղթատարական վրայի յարկը

Սոյն վաճառատան մէջ խիստ ածան գներով կը վաճառուին ամեն տեսակ ճերմակեղէնք, կանանց համար կրկնոցներ, տղայոց համար հագուստներ, կէս շրջազգեստներ, քօռսէներ, օժտի համար ճերմակեղէնք, բանուածքներ, բազմատեսակ գուլպաներ, թաշկինակներ և այլ այս տեսակ ապրանքներ։

Այս ապրանքներ, որոց ամենքն ալ լաւ տեսակէ են, կը վաճառուին թէ՛ փոքր և թէ մեծ քանակութեամբ։

Այս ապրանքներ կը պատրաստուին Վիէննայի և Պերլինի յատուկ գործարանաց մէջ։ Նոյնպէս Անգլիէն, Իտալիէն և Եւրոպական ուրիշ երկիրներէ եւս ապրանքներ կը բերուին։

Գաւառներէ եղած յանձնարարութիւնք կը կատարուին եթէ փոխարէնը փոխանակագրով և կամ թղթատարական դրոշմով դրկուի։

Զը հաւնուած ապրանքները ետ կ'առնուին և ստակը ետ կը տրուի զեղչելով փոխադրութեան ծախքը։ 36

ԴԵՂ ՋԵՐՄԻ ԵՒ ՏԵՆԴԻՑ

Ցոքթոր Այէրի Ջերմային հիւանդութեանց այս դեղն՝ որ անխառն բաղադրութիւն մի է զուտ բուսեղինաց, է դասնահամ և ազդու կազդուրիչ ամեն տեսակ ֆիզիկական խանգարմանց, որ յառաջ կուգան ճախճախուտ վայրերու ջերմամ կլիմայից վատ ու ապականեալ օդերէն, որոնց օգտակարութիւնը և ապաքինիչ ստոյգ յատկութիւնը երաշխաւորեալ է նորա անհամար արդեանցը ստոյգ գիտութեամբն։ Այս ֆիզիկական խանգարումներն յառաջ կուգան օդին մէջ լողացող թունաւոր անէնմարելի նիւթոց միջոցաւ, որք թոքերէն անցնելով՝ կը մտնէն արեան մէջ, կը խանգարեն լեարդը, և յառաջ կը բերեն տեսակ տեսակ ջերմեր և տենդեր, և արեան թունաւորումն, որոց ամենքն տրուած է. ջերմն և սարսուռ, թագուն ջերմ, պարբերական ջերմն, ընդհանուր ջերմն, մաղձային տենդ և հրատապ տենդեր։

Թունաւորեալ օդերէ պատճառեալ հիւանդութիւնք կը պատահին այն տեղեր ուր մթնոլորտը ապականեալ և թունաւորեալ է ճահիճներէ կամ ճախճախուտ վայրերէ բուրեալ ժահահոտ նիւթերով, կամ բաց աղբանոցներէ և ականներու ծակտիներէն եկած թունաւոր կաղերով, զորս մարդիկ կը ծծեն շնչառութեամբ։

Այէրի ջերմի ու տենդից դեղն կը ջնջէ այդ թունաւոր նիւթոց կամ կաղերու ազդեցութիւնը և դուրս կը վանէ զայն մարմնոյն մէջէն, որպ գործածութիւնն ստուգապէս անվտանգ և անվնաս է և օգուտն ստոյգ, միայն թէ տրուած հրահանգից հաւատամա գործածուի։ Կը ծախսուի Միացեալ Նահանգաց և ընկերաց Ամերիկեան վաճառատան մէջ ի Ղալաթիա Կոստանդնուպոլսոյ։ 166

ՕՐԻՆԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
ՀԱՅԿԱԿԱՆ ԵՒ ՄԱՐՈՒԵԱՆ
Ն. ԲԱՔԷ ԵՒ ԸՆԿ.

Մարսելիայ և Բօրիէ գլխաւոր կանոնաւորապէս թանող

Սամսոն, Տրապիզոն և Պաթում երթալու յատաջիկայ շոգենաւն է Մէնդրելի որ պիտի մեկնի յունիս 10ին։

Ուղղեն և որոշ տեղեկութիւն

Նաւաղոյնքի, ուղեւորութեան և այլ տեղեկութեանց համար

Դիմել առ գործակատարն
ԹԻՆՈՒՈՒԹ ՐԸՊՈՒԼ.
Թիւ 17-18 Թիւրիւք Միւլէթ
Մոմանէ փողոց, Թիւ 14

1606

ՔՐԻՍԹՈՖԼԷ ՈՍԿԵՐՁԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ԱՐՈՒԵՍՏԱՀԱՆԴԷՍ 1878Ի

ՄԵԾ ՄՐՑԱՆԱԿ

Որ միմիայն տրուած է Արծաթազօծ ոսկերչական գործոց

և ՔՐԻՍԹՈՖԼԻ անունն ամբողջ Միակ երաշխաւորութիւն գնորդին համար

ՔՐԻՍԹՈՖԼԷ ՍՊԱՍԱՔ

ՍՊԻՏԱԿ ՄԵՏԱՂԻ ՎՐԱՑ ԱՐԾԱԹԱԶՕԾԵԱԼ

Առանց հոգ ընելու մեղ դէմ մղուած գնոյ միցման, որ անշուշտ տեսակին յատութեան չնորհիւ կրնայ լինիլ, միշտ պահած ենք մեր արտադրութեանց կատարելութիւնն և հաւատարիմ մնացած ենք մեր սկզբան՝

ԼԱՒԱԳՈՅՆ ԳՈՐԾ ԾԱԽԵԼ ԿԱՐԵԼԻ ԵՂԱՆԻՆ ՁԱՓ ԱԺԱՆ

Գնողին միտքն հանգարտ պահելու համար, նմանապէս պահած ենք

ՄԵՐ ԱԳՐԱՆԱՑ ԼԱՒՈՒԹԻՒՆՆ

ինչպէս որ մեր քառասնամեայ փորձառութիւնն անհրաժեշտ ցոյց տուած է մեզ։

Գնողին համար իրը միակ երաշխաւորութիւն, պէտք է որ ապրանաց վրայ գտնուի գործարանին նշանն և ՔՐԻՍԹՈՖԼ անունն ամբողջ տառերով։

Կ. Պոլսոյ և Թուրքիոյ համար մեր միակ ներկայացուցիչներն են ՊՈՐԹՈԼԻ ԵՂԲԱՐՔ, Ի ՊՕՆ ՄԱՐՇԷ, 354, Բերայի մեծ փողոց, ուր գնողք կրնան վստահ լինիլ, թէ մեր անուամբ ստորին ապրանք չպիտի ծախուի իրենց։ 85 ՔՐԻՍԹՈՖԼ և ԸՆԿ.

ՀԱՋ. ՇՆՉԱՐԳԵԼՈՒԹԵԱՆ, ՊՐՈՆՇԻԴԷ, ՀԱՐԲՈՒԹԻՒ, ՑՐՏԱՌՈՒԹԻՒՆ ԱՆ ԼԻ ՁԱՅՆԻ ԿԸՐԿԵՐՄԱՆ ՀԱՄԱՐ

ՇՆՉԱՓՈՂԻ ԵՒ ԽՈՀԱՓՈՂԻ ՀԻԱՆԴՈՒԹԵԱՆՑ դէմ իրը ապահով դարման այս դեղին վայելած համբաւը միշտ կը հաստատուի այն բազմաթիւ նամակներով զորս Պ. Բուռէլ կ'ստանայ անոնցմէ որք գործածած և ճանչցած են նորա յատկութիւնները։

«Անգլիոյ Թագուհւոյն Նէրվլի Թէթանօթարդին վրայ, ի Ռէիթ, Սկովտիա.

«Պրէյլի պարան. Քսա որում կը նեղուէի յանկարծ հազ մը որ գիշերը կ'արգելուր ինձ քնանալ և ցերեկ չանգիստ անցուցնել, վասն. կամ ՔՐԻՍԹՈՖԼ յանձնարարեց ինձ գործածել ձեր անգուգական բալասանէն անիսանի հատիներով և կրնամ հաւատալ ձեզ թէ առաջին գործածութենէն իսկ զգալի բարւոքում կրեցի, առանց իսկ պէտք ունենալու գործերս դադրեցնելու, և առաջին փորը սրուակը բոլորովին բուժեց զիս։ Ուստի անոր ազդեցութեան վրայ ունեցած մեծ վստահութեամբս կը յանձնարարեմ զայն այլոց։

(Ստոր.) Վ. ԼԻՆԶԼԻ, Նէրվլի Թէթանօթարդէն.

Կը վաճառուի ամեն դեղատանց և արատնեալ դեղերու վաճառականաց քով, շիշը 1 շիլին ½ բէնսի, 2 շիլին 3 բէնսի և 11 շիլինի։—Պատրաստեալ ձեռամբ ԹՈՄԱՍ ԲՕՈՒԷԼԻ, 4, Ալպոն Բալէյս, Պլաքֆրիարս բրտ, Լոնտոն։

Մեծաքանակ և փոքրաքանակ կը վաճառուի Թուբբիոյ և Պորկարիոյ ներկայացուցչին քով 76 Մ. ԷՍՄՈՒՆՏ ԳԱՐՈՒԱՆԱ

Անգլիական Ընդհանուր Մթերանոց, Վ.ոյմոտա, պահականոցին քով, կայարան Թրամուէյից, 95 և 97

ԱՆԳԼԻԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿ.

ԸՆԴԴԷՄ ՀՐԴԵՀԻ

THE MUTUAL ACCIDENT ASSOCIATION LIMITED

ԱՐԿԱԾԻ ՀԱՄԱՐ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ

Երաշխաւորեալ դրամագլուխ 100000 անգլ. ոսկի ամբողջ. ստորագրեալ

ՍՈՎՈՐԱԿԱՆ ՄՈՒՐՀԱԿԻՑ

Տարեկան ½ ոսկւոյ գրամիմ մը կ'ապահովէ 1000 ոսկի, Մահուան կամ Մշտական և բացարձակ անխարդութեան պարագայի մէջ։
333 ոսկի, Մշտական և մասնական անկարողութեան պարագայի մէջ։
Շաբաթական 6 ոսկի, առժամեայ անկարողութեան պարագայի մէջ, թէ՛ ամբողջական և թէ մասնական։

GLASGOW & LONDON ԿԱԱՍԿՕՅԻ ԷՆՏ ԼԸՆՏԸՆ

Դրամագլուխ 300,000 Անգլիական ոսկի

Թուրքիոյ համար ընդհանուր գործակալք ՀՈՒԳՈՆ ԵՂԲՈՐՔ ԵՒ ԸՆԿ.

(171) Պոլիս, Սուլթան Համամ, Սայտիէ խան, թիւ 13, 14, 15

ԿԵԱՆՔ, ԱՌՈՒԹՍ և ԳԵՂ ՄԱԶԵՐՈՒ.

Մ Ա Լ Ի Ր Օ Ջ

ՍԱԼՕԵՐՈՒ ՄԵԿ ՀԱՏԻՎ ՆԻՒԹԵՐԻՑ

Իրապէս իրենց տոյժ թարմ գոյնին կը դարձուցնէ ճերմակեալ կամ գունաթափ մազերը. Կը դադրեցուցնէ անոնց թափելը. Կը մաքրէ գլուխը, կը վերջացուցնէ թեփը, ու մազերուն նոր կեանք, աճում, փայլ ու գեղեցկութիւն կուտայ։

Կը վաճառուի երկու չափով մեծ շիշերու մէջ։

Գլխաւոր մթերանոցը կ'գտնուի է (114 and 116, Southampton Row). Տ'ոյնպէս Բարիզ ու Նիւ Եորք։

Կը վաճառուի գ. և Ն. Քանֆիլտ եղարաց Բրիտանական դեղարանը. 453 Մեծ փողոց Բերա, Իսմէն Բարատանա. Դարամիա, Եիւսէք Բարատրամ 95 և 97. Բիշիքթաշ Ալբար; քով 77 Իմիր Իօնիւ,— 51 Եէնի ճամի և 163 Մեծ փողոց Բերայի, և Իզմոտի քով Բերա Մեծ փողոց թիւ 423։ 61

1244

MALADIES NERVEUSES

CAPSULES du Docteur Clin

Lauréat de la Faculté de Médecine de Paris. — Prix Montyon.

Les Capsules du Docteur CLIN au Bromure de Camphre s'emploient dans les **Maladies nerveuses** et du **Cerveau** et contre les Affections suivantes :

Asthme, Insomnie, Battements du Cœur, Hystérie, Epilepsie, Hallucinations, Etourdissements, Migraines, Affections des voies urinaires et pour calmer les excitations de toute nature.

Une Instruction détaillée accompagne chaque Flacon.

Exiger les **Véritables Capsules** *au* **Bromure de Camphre** *de* **CLIN & Cie**, de **PARIS**, *que l'on peut se procurer chez les Droguistes et Pharmaciens.*

Coleman's Liebig's Extract of MEAT & MALT WINE

MAKERS OF TESTIMONIALS NOT FAKED BUT CLIPPED FROM MEDICAL MEN

ԳՈԼԻՄԷՆԻ ԳԻՆԻՆ հեշտահամ և կազդուրիչ ըմպելի մ'է, բաղկացեալ Բորդոյի գինիէ, Լիէպիկի մսի հիւթէ և Մալթի հիւթէ, կազմելով այպէս անուշանող, զօրաւոր և գրգռիչ խառնուրդ մը, որ թէ առողջ և թէ անկար մարդոց համար լաւ է հաւասարապէս։

Բժշկական համալսարանն հաւանած է նոա և բազմաթիւ նշանաւոր բժիշկներէ յանձնարարեալ է։ ՀԱԶԱՐԻ ԱՌԵԼԻ բժիշկ զրած են իրենց վկայութիւններն։ Աստ կը թարգմանենք վկայութիւնն առաջնոր

Թ. ՐԷՃԻՆԱԼՏ ՃՈՆԷՍԻ, Մ. Ր. Ս. Ա. Լ. Լ. Մ. Ֆ. Ս. Ր. Ճ.ԵՒ ԸՆԿ.

26, Լորն Բոա և 24 Համիլդէն Սկուէյր

Պրքրնհիա, 2 սեպտեմբեր 1888

Պարոնայք — Ի նկատ առնլով խարդախ մրցման մը հանած գանազան լուրերը, կը փափաքիմ յայտնաւ ձեզ թէ որչափ գոհ եմ ձեր Մսի և Մալթի պատրաստութենէն. Քանի քանի անգամներ տեսած եմ սար առողջաբար ազդեցութիւնն այն հիւանդութեանց վրայ որոց համար պատուիրած եմ դայն, և ինչ ինչ պարագայից մէջ ձեռք բերած եմ հրաշալի արդիւնքներ զորս պարզ գիտենն (առանց մուգի) չպիտի կրնար տալ։

Ընդունեցէք, և այլն և այլն

Թ. Ռ. ՐԷՃԻՆԱԼՏ ՃՈՆԷՍ

Ի վերջոյ, մայրաքաղաքիս գլխաւոր բժիշկք ներքնապէս յանձնարարած են զայն։

Հարցնել ԳՈԼԻՄԷՆԻ ԳԻՆԻՆ Լիէպիկի մսի և Մալթի խառնուրդով, գաւառական կեղծերէն։

Պիտեցէք ստորագրելոյն, միակ գործակալ ի Թուրքիա Դոյիման և ընկերութեան գործարանին

Ս. Ճորճ Նորուիչ և Լոնտոն։ ԷՍՄՈՒՆՏ ԳԱՐՈՒԱՆԱ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԹԵՐԱՆՈՑ ԱՆԳԼԻԱԿԱՆ, պահականոցին քով, կայարան Ղալաթիա-Շիւլիի Թրամուէյից- Թիւ 95 և 97, Ղալաթիա 80

VICHY

Վ Ի Շ Ի

Ֆրանսա (գաւառ Ալիէի)

ԿԱԼՈՒԱԾ ՖՐԱՆՍԱԿԱՆ ՊԵՏՈՒԹԵԱՆ

Վարչութիւն՝ Փարիզ, 8, Պուլվար Մոնմարթր

ՀԱՆՔԱՔՐՈՅ ԵՂԱՆԱԿ

Վիշիի հաստատութեան մէջ, որ Եւրոպոյ նմանօրինակ լաւագոյն հաստատութեանց մին է, ամեն տեսակ լոգարան և դուշ կը գտնուի սպամսի, ֆայենսի, գլխոյն ներքնարանաց, սառնասի, տպղրարդարեան, կոնոսի հիւանդութեանց բուժման համար

Ամեն օր՝ մայիս 15էն մինչև սեպտեմբեր 15՝ թատրոն և նուագահանդէս ի Քազինոս։—Երաժշտութիւն պարտէզին մէջ։—Ընթերցասրահ։—Տիկնանց վերապահեալ սրահ։—Խաղաց, խօսակցութեան և գնդամուղի սրահներ։

ԱՄԵՆ ԵՐԿԱԹՈՒՂԻՑ ԿԸ ՏԱՆԻՆ Ի ԳԻՇԻ

Տեղեկութեանց համար դիմել առ Ընկերութիւն, Պուլվար Մոնմարթր, 8, Փարիզ։ 269 5—10

ՊԼԱՆՔԱՌԻ ԴԵՂԱՀԱՏՆԵՐ

BLANCARD

ԵՐԿԱԹԻ ԱՆԵԼՔ ԻՕՏԻԻՌՈՎ

PARIS 1855 — NEW-YORK 1855

Ընդունուած բարիզի բժշկական Ակադեմիային, Ֆրանսական պաշտօնական Ֆոռմիւլէ-ուն, եւ արտաքին բեղուսպորիկի բժշկական խորհրդոյն։

Այս Դեղահատներն, որք իրար խառնած են Իօտին և Երկաթին յատկութիւնները, մանաւանդ կը յարմարին այն բազմազան խօթութեանց որ յառաջ կուգան խոյլային սերմէն (ուռեցք, պալարեր), հիւանդութիւնք որոց դէմ անկարող են պարզ երկաթախառն ջուրերը, Դեղնութենէն, Սեւամահութենէն, Դաշտանի հիւանդութենէ, Թոքախտ, Դաղդիական սիրտ եւ։ Վերջապէս ամենադէպ դարման մ'են ստամոքսը գրգռելու և աշխային ուտելար խառնուածները բարեփոխելու համար։

Ծա. Անմաքուր կամ խառն երկաթի իօտիւրը գրգռիչ ազդարդիւն դեղ մ'է։ Իրր ապացոյց Պլանքառի Դեղահատներուն գտութեան և վաճառականութեան պէտք է փնտռել մեր արծաթեայ կնիքն, այս ստորագրութիւնն և Union des Fabricants դրոշմը։

Blancard

Դեղագործ ի Բարիզ. Rue Bonaparte 40

Զգուշանալ կեղծերէն

ՄԱԴԴՈՆԻ

ԿԻՍԱՀԻՊԼԷՐ

ՀՈՆԳԱՐԻՈՅՆ ԲՆԱԿԱՆ ՁՈՒՐ

Կալաքարային թթուուտ աղբիւր ամենամաքուր

ՍԵՂԱՆԻ ԼՄԱԱԳՈՅՆ ԵՒ ՁՈՎԱՐԱՐ ՀՎԱՆԻ

Հաղերու, խռչփոցի բորբոքմանց, ստամոքսի և աղեաց համար յանձնարարեալ։

Հայնրիխ Մադդոնի, Գարլսպատ և Վիեննա 47

ԽԱՐԻՍԽ

ԿԵՆԱՑ, ԵԿԱՄՏԻՑ ԵՒ ՕԺՏԱՑ

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ի ՎԻԵՆՆԱ

Գործողութիւնք 1889 Յունվար ամսուն

Այս ամսուան մէջ ստացուած եւ ստորագրուած 906 նոր մուրհակներ (բոլոր) որք կը կազմեն ապահովագրեալ դրամագլուխ, Ֆր. 5,539.255
Բաժիններու զանձումն » 1,543,500
Վճարումն մահուանց առթիւ » 296,100
1888 դեկտ. 31ին երաշխաւորեալ հասոյթ Ֆր. 86,899,959·12
Ամբողջութիւն ապահովագրեալ գումարաց Ֆր. 408,448,921·35
Վճարեալ գումարք » 141,324,497 —
Տեղեկութեանց համար դիմել առ ընդհանուր Գործակատարն Պ. Լիոնել Պոնտի։
Թիւնէլի հրապարակ, տուն Մայերի, երկրորդ յարկ. 48
Ընկերութեան տեղապահն է Պ. Ս. ԱՏԼԷՐ

ԱՐԵՒԵԼԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻՔ



ԵՐԹԵՒԵԿՈՒԹԻՒՆ ԸՆԴ ՄԷՋ Կ. ՊՈԼՍՈՅ ԵՒ ՔԻՉԻՔ—ԶԷՔՄԷՃԷ

Սկսեալ ի 1 Յունիս (Ն. Տ.) 1889, մինչեւ ցնոր տնօրինութիւն

Կ. ՊՈԼՍԷՆ ՔԻՉԻՔ—ԶԷՔՄԷՃԷ

ԹՈՒԱՀԱՄԱՐ ԿԱՌԱԽՄԲՈՑ

	6	8	10	52	12	14	16	18	20	22	24	26	28	30	32	34	36	38	40	42	44	46
	Առաւօտ															Իրիկուն						
	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.
Կ. Պոլիս	6 30	7 —	7 30	7 50	8 30	9 —	9 30	10 30	11 ...	11 30	12 ...	1 30	2 ...	2 30	3 ...	4 —	4 30	5 ...	5 30	6 ...	6 50	7 ...
Գուլ—գաբու	6 39	7 9	7 39	8 8	8 39	9 9	9 39	10 39	11 9	11 39	12 9	1 39	2 10	2 39	3 9	4 9	4 39	5 9	5 39	6 9	6 39	7 9
ԵՂԷՆ—գաբու	6 43	7 13	7 43	...	8 43	9 13	9 43	10 43	11 13	11 43	12 13	1 43	2 14	2 43	3 13	4 13	4 43	5 13	5 43	6 13	6 43	7 13
Տաուտ փաշա	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...
Սամաթիա	6 49	7 19	7 48	...	8 49	9 18	9 49	10 49	11 19	11 49	12 19	1 49	2 20	2 48	3 18	4 19	4 49	5 19	5 48	6 19	6 49	7 18
Եէնի—գուլէ	6 54	7 23	8 1	8 22	8 54	9 21	9 54	10 54	11 24	11 54	12 22	1 54	2 26	2 51	3 22	4 24	4 54	5 23	5 50	6 24	6 53	7 22
Մաղրիգիւղ	7 9	7 33	8 12	8 39	9 6	...	10 5	11 6	11 37	12 5	—	2 5	2 38	...	3 36	4 35	5 5	5 35	...	6 53	7 6	7 53
Ալ Մթէնմնօ	7 18	...	8 21	8 52	9 15	...	...	11 15	11 47	...	—	...	2 47	...	3 45	...	...	5 44	...	6 43	...	7 42
Քիւչիւք Զէք.	...	...	...	9 3	...	...	...	...	11 55	...	—	...	...	...	...	...	...	...	...	6 55	...	...

ՔԻՉԻՔԻՔ—ԶԷՔՄԷՃԷՆ Կ. ՊՈԼԻՍ

ԹՈՒԱՀԱՄԱՐ ԿԱՌԱԽՄԲՈՑ

	5	7	9	11	13	15	17	19	21	23	25	27	29	31	33	35	37	39	41	43	51	45
	Առաւօտ															Իրիկուն						
	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.
Քիւչիւք Զէք.	...	6 50	...	...	...	...	...	...	...	...	12 34	...	...	...	...	...	...	...	...	6 18	...	...
Ալ Մթէնմնօ	6 30	7 ...	...	8 ...	8 30	...	9 30	...	11 28	...	12 43	...	...	...	3 ...	4 ...	...	...	6 ...	6 27	...	...
Մաղրիգիւղ	6 40	7 10	7 40	8 11	8 40	...	9 40	10 12	11 40	12 15	12 53	...	2 11	...	3 10	4 10	4 40	5 10	...	6 10	6 42	7 12
Եէնի—գուլէ	6 52	7 22	7 51	8 23	8 52	9 26	9 52	10 24	11 52	12 27	1 4	1 25	2 23	2 55	3 21	4 22	4 52	5 22	5 55	6 22	7 ...	7 54
Սամաթիա	6 56	7 26	...	8 26	8 56	9 29	9 56	10 28	11 56	12 31	1 7	1 29	2 27	2 58	3 24	4 26	4 56	5 26	5 58	6 26	...	7 58
Տաուտ փաշա	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...
Եէնի—գաբու	7 2	7 32	...	8 32	9 2	9 34	10 2	10 34	12 2	12 57	1 13	1 34	2 33	3 4	3 30	4 32	5 2	5 32	6 4	6 32	...	7 44
Գուլ—գաբու	7 8	7 38	7 59	8 38	9 8	9 38	10 8	10 38	12 8	12 41	1 17	1 38	2 38	3 8	3 34	4 38	5 8	5 38	6 8	6 38	7 11	7 48
Կ. Պոլիս	7 16	7 46	8 7	8 46	9 16	9 46	10 16	10 46	12 16	12 49	1 25	1 46	2 46	3 16	3 42	4 46	5 16	5 46	6 16	6 46	7 20	7 56

Փոքր ծարանեն անխտիր կ'ընդունուին ամեն կառախումբի մէջ, իսկ մեծ ծրարք Պոլսէն Մաքրիգիւղ կամ սուելի հեռի կայարանաց միջև բանող կառախմբոց մէջ միայն կ'ընդունուին. Թիւ 1 և 2 կառախումբերն ունին Ա. Բ. և Գ. կարգի վագոններ. միւս կառախումբերն ունին միայն Բ. և Գ. վագոններ։ 196

Արտօնատէր Ս. ՏԱՄԱՏԵԱՆ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԵՒԵԼՔ ԼՐԱԳՐՈՑ